



## ՄԱՐԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ  
ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

55ՐԴ ՏԱՐԻ. ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 28-29

9 ՅՈՒՆԻՍ 1907

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կոյսին Պակեր

Հայ Եկեղեցականութիւնը

Մայրումը

Բնայի Ծաղիկներ

Վարդ-Այգ

Լուսանկարը

Եղիային Մուրալը

Կիններու Դաստիարակութիւնը

Յօր. Ճօրն Ուռույթն.ի

«Գլուխ Պէտք Ունի Ուսիդ»

Գրիգոր Պատուելի Փէտիմալեան

Դալիլա

Պատանիան «Մասիս»ի Հարցումին

Վեցեթիկ

Դերման Գրականութեան Դէմքեր

Նոր Գիրքեր

ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿ. ԴՈՒՐԵԱՆ

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ

Յ. ԱԼՓԻԱՐ

ԵՂԻԱ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

ՊԵՐՃՈՒՀԻ ԵԱԶՐՃԵԱՆ

ԶԻՅՅԷ-ՍԱՐԱՑ

ԱԲՐ. ՏԷՐ ՅԱԿՈԲԵԱՆ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ՄԻՆԱՍ ԾԱԼԵԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

ՄԷՐՍԷՏԷՍ

ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐԵԱՆ

ՄԵԼԻՔ ԹԷՎԷՔԷԼ

ՏԻԳՐԱՆ ԶԷՕԿԻՐԵԱՆ

### ԿԱՐԾԻՔՆԵՐ

ՄԱՂԱՐԻԱ ԱՐՔ. ՕՐՄԵՆՆԵԱՆ, ՍԻՊԻԼ, ԸՌԻԶԱՆԳ ԴԷԶՆԱՆ  
ՅԱԿՈՐՈՍ ՃԷՃԻԶՆԱՆ, ԱԼՓԱՍԼԱՆ, ԶԻՅՅԷ-ՍԱՐԱՑ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱԳԱՆԱՆ

1907

# UNIVERSITY

OF THE STATE

OF NEW YORK

THE STATE OF NEW YORK

IN SENATE

JANUARY 1887

## REPORT

OF THE

COMMISSIONER OF

THE LAND OFFICE

IN

RESPONSE TO A

RESOLUTION

PASSED

BY THE SENATE

APRIL 1886

AND BY THE

ASSEMBLY

MARCH 1887

AND BY THE

COMMISSIONER

OF THE LAND OFFICE

IN

RESPONSE TO A

RESOLUTION

PASSED

BY THE SENATE

APRIL 1886

AND BY THE

ASSEMBLY

MARCH 1887

AND BY THE

COMMISSIONER

OF THE LAND OFFICE

IN

RESPONSE TO A

RESOLUTION

OF THE

COMMISSIONER OF

THE LAND OFFICE

IN

RESPONSE TO A

RESOLUTION

PASSED

BY THE SENATE

APRIL 1886

AND BY THE

ASSEMBLY

MARCH 1887

AND BY THE

COMMISSIONER

OF THE LAND OFFICE

IN

RESPONSE TO A

RESOLUTION

PASSED

BY THE SENATE

APRIL 1886

AND BY THE

ASSEMBLY

MARCH 1887

AND BY THE

COMMISSIONER

OF THE LAND OFFICE

ALBANY

PRINTED BY THE STATE

1887

## ՊԱԼՔԱՆ

ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐԶԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Դրամագլուխ և պահեստ ֆրանք 9,500,000

Վերապահովագրական

գրամագլուխ և պահեստ » 142,740,000


ՊԱԼՔԱՆ Ընկերութիւնը կ'ապահովագրէ հրդեհի դէմ ամէն տեսակ կահ կարասի եւն., Կ. Պոլսոյ և Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ շատ գիւրամատչելի պայմաններով. իսկ իր միւս երկրորդ ճիւղը անմրցելի գիներով և պայմաններով օժտուած է. կը կատարէ իսառն ապահովագրութիւն, ընտանեկան, մանուկներու, եւն. եւն.:

Ընդհանուր գործակալ Թուրքիոյ ԱՐՇԱԿ ՈՒՆՃԵԱՆ  
ալաքիա, Տեօյլէ Օրիէնդ Պանքի կից, Սիմատոն Խան. (2)

Հանգուցեալ Կարապետ էֆ. Իւթիւճեանի Թարգմանած հետեւեալ հետաքրքրական գիրքերը կը ծախուին բոլոր հայ գրավաճառներու քով. Կեդրոնատեղի Աշտնան գրատուն:


|                                     |         |
|-------------------------------------|---------|
| Ընտանեկան Գաղանիքներ 3 հատոր        | 15 զրշ. |
| Արուարձանին Տղան 3 հատոր            | 15 զրշ. |
| Հանրակառքին Ոճիրը                   | 5 զրշ.  |
| Ամուսնութիւնք Բարիզու               | 5 զրշ.  |
| Քաղաքական Տնտեսութիւն. Ժօզէֆ Կառնիէ | 5 զրշ.  |

Եղիա Տէմիրճիպաշեանի Հայերէնէ-Ֆրանսերէն Բառարանը, որ դեղեցիկ աշխատութիւն մը և ամէն անհատի անհրաժեշտ Բառագիրք մըն է, կը գտնուի ծանօթ գրավաճառ Ջարեհ էֆ. Թորոսեանի քով, (Պոլիս, Պահլէ Գարու, Բասըմ Բաշա Խան) որուն կրնան գիմել Բառարանին՝ (գինը 15 զրշ. փօսթի ծախքով 16<sup>1</sup>/<sub>2</sub>) ինչպէս գրեհական ամէն տեսակ յանձնարարութիւններու համար, խղճամիտ գրավաճառի մը հետ գործ ունենալու լստահութեամբ. — Իր հրատարակութիւնն է նաև Դպրոցի Գիրքը դասագիրքերու շարքը, որ միակն է Կանոնաւոր մէթոտով մը ընթացող՝ նախակրթական դասընթացքի շրջանին համաձայն:



Կը գտնուի բոլոր  
դեղագործներուն քով:  
Թուրքիոյ ներկայա-  
ցուցիչ Ո. Սօլաքեանց.  
Կ. Պոլիս:

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԸ. — Բերայի Ս.  
 Երրորդութիւնն եկեղեցիին հարիւրամեակը պիտի տօնուի յառաջիկայ կի-  
 րակի, Հոգեգալուստի տօնին օրը: Այս պատկառելի հանդէսը բաժ-  
 նուած է երեք մասի. Ա. եկեղեցական արարողութիւններ, Բ. Միջօրէի  
 սեղան, Գ. Գրական հանդէս: Այս առիթով Բերայի Թաղ. Խորհուրդին  
 կողմէ բարձրաստիճան եկեղեցականներու և աշխարհական ծանօթ անձ-  
 նաւորութիւններու հրաւիրագիրներ ղրկուած են: Պիտի պատարագէ և  
 հանդէսին պիտի նախագահէ Ս. Պատրիարքը: Հանդէսին յայտադիրն է.  
 — Ս. Պատարագ. — Ամեն. Ս. Պատրիարք Հայր: Հարիւրամեակի հոգե-  
 ւոր երգ. (հարիւր տարի առաջուան հեղինակութիւն). — Շապկազգեստ  
 սանուհիներ Էստեան վարժարանէն: Հոգեհանգիստ. — եկեղեցական դա-  
 սին կողմէ: Հոցկերոյթ Արուեստանոցի Սրահին մէջ, Գրական հանդէս  
 Նարեկեան մանկապարտէզի մէջ, ուր պիտի արտասանուին հետեւեալ  
 բանախօսութիւնները. Բացման ճառ (Հարիւրամեակին իմաստը բացատ-  
 րող). — Գր. Մարգարեան: Բերայի առաջին ազգ. հիւանդանոցին պատ-  
 մութիւնը. — Տօքթ. Թորգոմեան: Բերայի քահանաներուն պատմութիւ-  
 նը. — Տ. Միքայէլ քհ. Աշնեան: Բերայի վարժարաններուն պատմութիւ-  
 նը. — Հրանտ Ասատուր: Բերայի Թաղ. Խորհուրդներուն պատմութիւնը.  
 — Միքայէլ Քաթմաճեան: Բերայի Աղքատախնայմին պատմութիւնը. —  
 Տօքթ. Գաբամաճեան: Բերայի Հայ բնակչութեան պատմութիւնը. — Ար-  
 շակ Ալպոյաճեան: Փակման ճառ. — Ս. Պատրիարք Հայր, որ պիտի խօսի  
 Բերայի Թաղին եկեղեցական և կրթական գործերուն վրայ: — Սանա-  
 սարեան վարժարանի իննամակալութիւնը, որոշած էր երկրագործական  
 դասընթացը մը հաստատել վարժարանին մէջ, միւս կողմէ ուժ տալով  
 նաև արհեստական ճիւղերու. այս նպատակով ծրագիր մը պատրաստել  
 տուած էր Նշան Էֆ. Գալֆաճեանի: Իննամակալութիւնը օգտակար և  
 նպատակայարմար գտնելով աւանդել երկրագործութեան և զիւղատնտե-  
 սութեան վերաբերեալ սկզբունքներ՝ ընդունեց նոյն ծրագիրը, միեւնոյն  
 ատեն ձեռնական աշխատութեան ճիւղ մըն ալ հաստատելով վարժարանին  
 մէջ: Այս ճիւղը պիտի աւանդէ վարժարանին ուսուցիչներէն Աղապատեան  
 Էֆ.: — Ստացանք Ատաբաղարի Հայունեաց Վարժարանին Յայտագիրը որմէ  
 կը տեղեկանանք թէ այս տարի ունի 16 ընթացաւարտուհի. — Օրք.  
 Աղաւնի Դայըքճեան, Արմենուհի Կալաճիկեան, Արմենուհի Ճրկայեան,  
 Արուսեակ Աղապատեան, Բերդու Անդրէասեան, Գալինիկ Թիմուրեան,  
 Եւնիկէ Դուրեան, Թարիա Պէրպէրեան, Գիւլէնիա Մոմճեան, Հայ-  
 կանոյ Թաթարեան, Հուլիսիմէ Աթանասեան, Հրանոյ Շաքարա-  
 գործեան, Հրանոյ Պօռազանճեան, Վիքթորիա Պօղոսեան, Քնարիկ  
 Միսքճեան, Ֆլօռա Գասպարեան: Ամովերջի հանդէսը պիտի կա-  
 տարուի 12/25 յունիսին: Շրջանաւարաններու քարոզը պիտի խօսի  
 Բրօֆ. Յակոբոս Ճէճիզեան 10/23 յունիսին, Աւետ. Հայերու  
 եկեղեցիին մէջ: — Մարդուանի մէջ հաստատուած Բիրէմիտեան  
 Գրական Մրցանակին ապրիլ 30ին տեղի ունեցած է Բ. մրցանակաբաշ-  
 խութիւնը: Վարժարանին տեսուչ Գաբիկ Էֆ. Օզանեանի բանախօսու-



## ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ  
ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

55ԻԴ ՏԱՐԻ. ՆՈՐ ՇՐՋԱՆ

ՔԻԻ 28-29

9 ՅՈՒՆԻՍ 1907

### ԿՈՅՍԻՆ ՊԱՏԿԵՐԸ

Ձեի սեսած երբեք հոգի մ'ա՛յնքան անբիծ,  
Որուն չըմաղ երկնումներեն թըլլակնահա՛ր՝  
Ըսի հոգւոյս՝ Խափանե հրա՛յրքոյ բոցակիծ,  
Ապա քե ո՛չ՝ ա՛յ չը փայլիր նա քեզ համար:

Ձեի սեսած երբեք մարմին մ'ա՛յնքան ծաղիկ,  
Որուն անուշ խընկումներեն զմայլա՛ծ յօժար՝  
Ըսի մարմնիս՝ Օժուռ ցօղո՛ւլ մը խաղաղիկ,  
Ապա քե ո՛չ՝ ա՛յ չը բուրբեր նա քեզ համար:

Ձեի սեսած երբեք ձախտ մը ա՛յնքան պերճ,  
Որուն ձերմակ պաղպաղումեն ես դաշկահա՛ր՝  
Ըսի ձախտիս՝ Մուր խոկումիդ հա՛րկ ե տալ վերջ,  
Ապա քե ո՛չ՝ ա՛յ չարժարիր նա քեզ համար:

Ձեի սեսած երբեք աչք մը ա՛յնքան անկեղծ,  
Որուն անբարբ սեւեռումեն ընդմըտա՛սա՛ր՝  
Ըսի աչքիս՝ Մեկդի դարձուր մայրամուտի զեղծ,  
Ապա քե ո՛չ՝ ա՛յ չը ջահիր նա քեզ համար:

Ձեի սեսած երբեք շուրք մը ա՛յնքան անփորձ,  
Որուն շիկնոս սուսկումեն մազնխում յար՝  
Ըսի շուրքիս՝ Դրսի՛ր կայծակ մը մաքրագործ,  
Ապա քե ո՛չ՝ ա՛յ չը ժըպսիր նա քեզ համար:

Ձեի սեւած երբեք չանջի մը ա՛յնքան ողոր,  
Որուն ըզգաս քաքախուռէն անպրոպահա՛ւր՝  
Ըսի կուրծիս՝ Լըռեցուր քո՛ւնդ, հեւքդ ու քոյոք,  
Ապա քե ո՛չ՝ աչ չը տրտիւր նա քեզ համար:

Ձեի սեւած երբեք խիղճ մը ա՛յնքան վրձնիս,  
Որուն քիւրեղ սեռնուքնէն անօքսահա՛ւր՝  
Ըսի խրդմիս՝ Մի՛ պրդսորէր հոսանքն ուժիդ,  
Ապա քե ո՛չ՝ աչ չը ներէր նա քեզ համար:

Ձեի սեւած երբեք պաշտակ մ՛ա՛յնքան սիրուն,  
Որուն մեղմիկ մըմունքներէն դիւքունա՛ծ խնար՝  
Ըսի ինքնի՛ն՝ Ծունկի եկուր իր ծունկերուն,  
Ապա քե ո՛չ՝ աչ չաղօքեր նա քեզ համար:

Այո՛, չեի սեւած պատկեր մը ա՛յնքան կեանք,  
Կոյսին պատկերն էր այն առանց իր Մանուկին.  
Հոգի՛ մարմին՝ մական՝ աչք՝ շուրք՝ շանջ՝ խիղճ՝ պաշտակ  
Յոյց կուշային զինք գերազոյն Մայր մը կամ Կին:

ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿ. ԴՈՒՐԵԱՆ.

## ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

[ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՕՐԵՐՈՒ ՄԷՁ]

Ե.

Ընդունինք, թէ մարդու համար ազիտութեան դժած չըջանա-  
կը շատ անձուկ է ու կաւային, մինչ դաստիարակութիւնը եւ գի-  
տութիւնը աւելի՛ լայն, աւելի՛ լուսաւոր եւ տեւական հորիզոններ  
կը բանան մեր տեսութեան հանդէպ: Տգիտութիւնը իբր գօրու-  
թիւն, ո՛չ համարձակ է և ո՛չ պարկեշտ, մինչ դաստիարակութեան  
պարգեւած բարոյիկ գիտութիւնը մարդու կուտայ սեռն համարձակու-  
թիւն մը, ճշդամէտ նայուածք, և թուի՛ք՝ դէպի վերերը խոյանալու,  
բարձրանալու մարդկայնական գերերկրային կոչումին: «Ան որ աչքերը  
չվերցնէր, կ'ըսէ Beacousfield, աշխարհի իրերը միայն պիտի տեսնէ և  
միտքը՝ որ երբեմն համարձակիւր դէպի երկինք իր թուի՛քը առնել, դա-  
տապարտուած է գետնին վրայ սողալու»: Փարատէ գետնասող տրամա-  
դրութիւնը Հայ Եկեղեցականութեան մէջէն, և մասամբ ձեռք բերուած  
պիտի ըլլայ եկեղեցական խնդիրին լուծումին մէկ դիւրութիւնը:

Դ. Եկեղեցական խնդրի ծնունդի պատճառներէն երրորդն է ՍՈ-  
ՎՈՐԱՄՈՒՈՒԹԻՒՆԸ:—Կ'ընդունինք, թէ սովորութիւնը ի՛նչ մեծ դեր  
խաղցած է մարդկային յառաջդիմութեան գործին մէջ: Սովորու-  
թիւնները վարժութեան ուժին գործնական կրկնումներն են, և ուժի  
օրրատօրէական կուտակումն է եղած ամէնէն աւելի մեծ ազդակը հիւ-  
նաւորութեանը մեր ընտելին, մեր նկարագիրին և մեր համոզում-

ներուն։ Այս պատճառով է անշուշտ, որ ըսուած է. «գործ մը սերմանէ, և սովորութիւն մը պիտի հնձես. սովորութիւն մը սերմանէ, և նկարագիր մը պիտի քաղես. նկարագիր մը ցանէ, և ճակատագիր մը պիտի ձեռք բերես»։ Յարգելով հանդերձ սովորութեան բարերար ազդեցութիւնը, անոր քաղաքակրթիչ դերը, չենք վարանիր յայտարարելու, թէ սովորաւորութիւնը չարիք մըն է, նման շատ մը մոլութիւններու, որոնք սովորութիւններով նուիրագործուած են։ Առաքինութիւնը անգամ, երբ չափազանցութեան միտի, և չունենայ իր արդարացուցիչ ու բանաւոր սլառճառը, պարզապէս մոլութիւն մը կ'ըլլայ, հետեւաբար և չարիք մը, յիմարութիւն մը։ «Աստիտական նախապաշարումը, հիմնապէս, միեւնոյն բնութիւնը ունի, ինչ բնութիւն որ ունի ան նախապաշարումը, ուրկէ ծնած են ճգնաւորութեան հրահանգութիւնները, և Տօն Փիչօթ, որ հողմաղացներու զէմ կուռելու համար ճամբայ կ'ելլէ, մեղի խորհիլ կուտայ ա'յն մենակեացներուն վրայ, որոնք չորցած գաւազան մը կը ջրէին, Թիբայիդի մէջ։ Առանց բաւարար պատճառի (raison) քաջարի ըլլալ կամ tempérament, ճամբատապէս ո'չ քաջարի ըլլալ կը նշանակէ, և ո'չ ալ ժուժկալ։ Կարելի է զանոնք միայն որակել «վսեմ յիմարութիւնով» (Ղ. Տիւկա)։

Սովորամոլութիւնն է խորշումը ո'ր և է փոփոխութենէ ընկալեալ սովորութիւններու կարգին մէջ։ Եւ այդ խորշումը աւելի անասնային է քան մարդկային. մեղուն բնաղդով սովորամոլ մըն է, երբ իր մեղրամոլի բջիջները կը կերտէ. ո'չ մէկ փոփոխութիւն, ո'չ մէկ խոտորում սովորութեան, Ատտիկէի մեղուններէն սկսեալ մինչև այսօրուան մեր մեղունները։ Եւ եթէ ուշադրութեան առնենք բոլոր անասուններուն ապրելակերպը և գործելակերպը, այդ բնական սովորամոլութիւնը պիտի գտնենք անոնց մէջ, իբր իրենց գոյութեան անհրաժեշտ պայմանը։ Երբ կ'ուսումնասիրենք հին դարերու մարդկային հասարակութիւնները, եւ նոյն իսկ մեր օրերուն ապրող վայրենիներուն կեանքը, չենք կրնար գտնել անոնց մէջ շատ մեծ տարբերութիւն մը, սովորամոլութեան մասին, որ զիրենք զատորոշէ անասնական կեանքէն։ Քաղաքակրթութեան ամենաստորին սանդղամասին վրայ ապրող մարդը սովորամոլութեան տեսակէտով անասուն մըն է, կամ զրեթէ-անասուն մը, որ ինքզինքը չէ կրցած տակաւին զերծել հին օրերու և ժառանգականութեան պրկող բազուկներէն։ Գիտենք, թէ ժառանգականութիւնը միշտ ու միշտ իր տիրապետող դերը պիտի կատարէ մեր յօրինուածութեանը մէջ, բայց չմոռնանք, թէ մարդկային իմացականութեան, կամքին և առողջ դաստիարակութեան գործն է չեղձացնել ժառանգականութեան պարտադրութիւնները մեր վրայ, և կարելին ի գործ դնել անոր տիրականութիւնը խորտակելու, և ստեղծելու անհատին մէջ ինքնութիւնը, որ այսօրին ըլլայ, նուազ խառնուրդովը անցեալին։ Հոս է որ սովորութիւններու զէմ ընդդգուծը կը սկսի. հոս է որ մարդ կը պայքարի իր

պապերէն հրիաւկուած կրօնական սովորոյթներու դէմ, որոնցմէ շատերը գոյութեան իրաւունքէ դադրած կ'երեւան իրեն համար: Սովորամուկները երեկի հաշուէն կ'ապրին, առանց ճիշդի ու ջանքի, որովհետեւ, կը խորհին, թէ իրենց հայրերուն կողմէն ձգուած ժառանգութիւնը, — սովորութիւնը, — բաւական է մինչեւ մահ զիրենք ապրեցնելու: Ահա՛ հոս կը սկսի ա՛յն անբարոյական լաւատեսութիւնը, որ ստացութիւնն է դժուարութիւններէ, նեղութիւններէ, աշխատանքէ բոլոր խուսափողներուն. «Ով որ չխորհիր, և թող կուտայ որ սովորութիւնը զինքը վարէ, միտումով լաւատես մըն է, կ'ըսէ Կիւյեօ. տղէս ժողովուրդը՝ որ գրեթէ գոհ է իր ապրած ժամանակէն, սովորամուկ մըն է ան. իր աչքին՝ կրօն. փոփոխութիւնն է ամենամեծ չարիքը: Որչափ ստորին է ժողովուրդ մը, այնքա՛ն կրօնքի մէջ կոյր պահպանողական մըն է»: Եւ այս սովորամոյական լաւատեսութիւնը անո՛ր համար, որ աղքատները՝ ըլլան մտքով թէ քսակով, շուտով կը գոհանան իրենց տրուած դոյզն նպաստներէն: Սովորամուկ անցեալին մակաբոյծն է, թրթուրը՝ որ գերեզմաններու ոսկորներուն հիւթը կը ծծէ անհոգ ու անտարբեր, անվատահ իր սեփական ուժերուն և չուղեւով ոսկրի կտոր մը վտանգել, ջանքով ու քրտինքով: Ան չկրնար ըմբռնել, թէ պատմութիւնը, քաղաքակրթութեան պատմութիւնը, իրականացած ցնորքներու շարք մըն է միայն: Սովորամուկութեան հակառակորդները, ընդհակառակը, այսօրին և վաղուան համար կ'ապրին, մէկ կողմէն ոգորելով հինի կաշկանդումին դէմ, և միւս կողմէն ջանալով հեզել վաղուան ու կրօնի ապագային խորհրդանիշ առեղծուածն ու ցնորքները: Յարգենք մեր պապերը, և անոնց սովորութիւնները, բայց չմոռնանք, թէ անոնք անցեալին կը վերաբերին ալ: Մեր ապրած ու բոլոր ապրուելիք դարերը կեանքի պէտքեր ունին, որոնք չեն կրնար հոգացուիլ, ուրիշ հին ու զառամած դարերու սովորութիւններով միայն: Մարդկութիւնը իր յաջորդական ծնունդներով աւելի վաղուան պէտք է պատկանի, քան թէ երէկին: Երէկը արդէն կ'իշխէ մեր վրայ ժառանգականութեան ու սովորութեան չնորհիւ. պէտք է զաւակները դերազանցեն իրենց հայրերը, զարգացումի, առողջ սկզբունքի, կեանքի տեսակէտով, և այդ իսկ պիտի ըլլայ հայրերուն փառքը: Ասոր մէջ կարենալ յաջողելու համար, պէտք է աւելի ուժ տանք կամքին, որ ժառանգականութեան օրէնքին հետ մեր մէջը կը գործէ:

Այդ կամքին ու այդ իմացականութեան ուժով պէտք է ամէն օր նոր վերածնում մը ունենանք, մեր սովորութիւններուն ստեղծիչը կամ դոնէ կարգադիրը ըլլալով, որպէսզի այդ շարունակական ծնունդներով կարող ըլլանք Աստուծոյ մօտենալու: Երէկի մարդկութեն ձուլածոյ շարունակականութիւնը ալ ո՛չ մեզ կը գոհացնէ և ո՛չ ալ Աստուծոյ: Կրօնքի իրաւունքը անցեալինը պէտք է ըլլայ ալ, քանի որ մեր վրայ անհրա-

ժեշտութիւն մը կայ վաղելու դէպի կրօնական տղազայի ինչութեան հարցը: Սովորամոլները կ'ուզեն որ «մեռելոց իշխանութիւնը», (pouvoir des morts) անողատճառ և ամէն պարագայի, միջամտէ մեր գործերուն: Կիւյեօ ստորին դասակարգի ժողովուրդներու և գիւղացիներու կ'ընծայէ սովորամոլութիւնը: Ասոր վրայ պէտք է աւելցնել նաև կիները, որոնք իրենց բնախօսական տկարութեան պատճառով, սովորամոլներ են: Եւ ասով պատրաստած կ'ըլլանք քեզ մը, որուն համեմատ պիտի կրնանք ըսել ալ, թէ սովորամոլութիւնը դաւանանքն է սկարներուն: Սովորամոլութեան մասին Շ. Վալինէր գեղեցիկ ու սիրուն պատմութեամբ մը ունի իր *L'Ame des Choses* գործին մէջ (էջ 177-183), ուր պարզ կերպով և օրինակով մը կը նկարագրէ «մտքի այն հանդարտութիւնը, որ կը ծնի երկար սովորամոլութիւններէ (routines), և ուր կը ներհն statu quoէն օրօրուած մարդերը». և կ'եզրակացնէ. «զբաղումով աւազակներու կատաղութիւնը բան մը չէ բաղդատմամբ կրօնքի մէջ statu quoի սիրահարներու անգիտակից անգթութեանը, ամէն միջավայրի և հաւատալիքի պատկանող սովորամոլներու վնասիչ հանդարտութեանը: Որովհետեւ չարագործը բացառութիւն մըն է. սովորամոլները ընդհակառակը չեղէն են, անոնք են թիւը, կարգ կանոնը (règle)»: Երբ Հայ եկեղեցականութեան մէջ կը մատնանշենք սովորամոլութեան, կրօնական այդ statu quoի խտր, ալ կարծեմ աւելորդ պիտի ըլլայ ըսել, թէ այդ նուիրագործուած ոչնչութիւնը ինչ բանէ ծնունդ առած է անոնց մէջ:

Վ.— Չորրորդ պատճառն է աններողութեան մոլեռանդութիւնը:— Աններողութեան մոլեռանդութիւնը կը կայանայ ուրիշներու կարծիքին ու խորհուրդին հակառակելուն, և սեփական կարծիքներն ու խորհուրդները բռնի ուրիշներուն պարտադրելուն մէջ: Թէ որչափ իրաւունք ունին աններողութեան մոլեռանդները իրենց այս հակամարդկային վարմունքին մէջ, ցոյց պիտի տան յետագայ խորհրդածութիւնները: Հոս աւելորդ է աններողութեան երեւոյթը դիտել իր ընդարձակ կառուածին մէջ, պիտի բաւականանանք միայն աչքի առջեւ ունենալով, և աններողութիւնը դիտելով իր կրօնական վերաբերման տակ: Չկայ կրօնք մը, որ ինքզինքը բռնի հարկեցուցիչ ըրած ըլլայ անհատներու: Կրօնքը համոզումի խնդիր մըն է, և համոզումը բռնի ուժով չէ կարելի ստեղծել: Մեր համոզումները կրնանք բռնի ուժով պարտաւորիչ ընել ուրիշներու. չվստահինք թէ հաւատացեալ մը աւելի ունեցանք. ընդհակառակը կեղծաւոր մը աւելի տուինք աշխարհի: Հիներէն անոնք, որոնք լաւագոյն կերպով ըմբռնեցին Գրիստոնէութիւնը, գործնականապէս ցոյց տուին իրենց մէջ՝ գերազանց ներողամտութիւն մը հանդէպ ուրիշներու, որոնք միեւնոյն փարախին մէջ ապրելով հանդերձ իրենց պէս չխորհեցան ու չըմբռնեցին կրօնքը: «Ամբարշտութիւն է, կ'ըսէ Տէրտուղիանոս, կրօնքի խնդրին մէջ, կապտել ուրիշներուն անձնիշխանութիւնը, ոչ մէկ

Աստուած բռնի պաշտամունք մը պիտի ուղէք: Եւ Յուստինոս, թէ «ճշունմէն աւելի հակառակ բան չկայ կրօնքի»: Յարգանքը ուրիշներուն խորհուրդին, դաւանանքին ու տեսակէսներուն, մէկն է ա՛յն անհրաժեշտ պայմաններէն, որոնք կրօնքի մը / որը կը կազմեն: Բայց պէտք է խոստովանիլ, թէ որքան կ'իշխէ մարդկային եսը, աններողութիւնն ալ, «խորհուրդին այդ եսամոլութիւնը», պիտի յարատեւէ մարդկային բարքերու մէջ, և ասոր համար իսկ ներողամտութիւնը պիտի կազմէ «իրապէս դժուարին առաքինութիւն»ներէն մէկը: Միջին Դարը, որ կրօնքի նուիրականութիւններէն շատ բան ջնջեց և անոնց տեղ պարտադրեց անհեթեթութիւններու շարք մը, ամէնէն աւելի ինքզինքը փայլեցուց աններողութեան մոլեռանդութիւնովը և այն բանադրանքներովը և խարոյկներովը, որոնք այդ աններողութեան, այդ ուրիշներու կրօնական իրաւունքի կապտումին յաւիտեական վկաները պիտի մնան: «Քրիստոնեաներուն սերմն է մարտիրոսներուն արիւնը» Լակտանտիոսի խօսքը անսուտ յայտարարութիւնը պիտի մնայ ա՛յն ճշմարտութեան, թէ խիղճերու վրայ լանեցուած կրօնական ճնշումը, փոխանակ կասեցնելու անհատական դաւանանքին հոսանքը, ա՛լ աւելի պիտի արդիւնաւորէ զանի, և կրօնական պատմութիւնը աններողութեան տիւր վկան միայն պիտի ըլլայ: Մտքի անձկութեան երկունքը և յայտարար նշանը եղող այդ աններողութիւնը, հալածանքի այդ յիմարութիւնը ի դուր սակայն վերապրիլ պիտի փորձէ: Առանց հակակիր ընդունուած դրութիւն մըն է անիկա, կրօնական անցեալին կտակումը, որ «ընդունուած բայց չհակակշռուած կարծիքներու միջոցով ի գործ կը դնէ իր ուժը, բայց այս կարծիքներուն շատը զուտ anachronismներ են միայն»: Ընդհանրապէս դիտուած է, որ տգէտ, իրենց համոզումներուն մէջ անհաստատ, իրենց դաւանանքին հանդէպ կասկածոտ մարդիկ եղած են աններողները (intolérant) կամ մոլեռանդները (fanatique): Աններողութեան մոլեռանդութիւնը գործի կը սկսի կասկածոտ վերաբերումով մը դէպի ուրիշները: Արդ, անկեղծ մարդիկ ուրիշներու մասին կասկածելու շատ պատճառներ չեն ունենար ընդհանրապէս, վարժուած ըլլալով միշտ ուրիշները իրենց անձին կշիռքովը կշռելու: «Տկար հոգիները (esprits) ինքզինքնին անապահով կը զգան իրենց սեփական հաւատալիքներուն մէջ. ինքզինքնին խախտուած կը զգան իրենց կարծեցեալ համոզումներուն մէջ, երբ իրենց մօտ կը տեսնեն մարդեր, որոնք իրենցմէ տարբեր կը հաւատան: Այդ տկար հոգիները պէտք կը զգան զանոնք անհետացնել, ըլլայ համոզելով, ըլլայ բնաջնջելով, որպէս զի կարող ըլլան իրենց ուղածին պէս հաւատալու: Կրօնական հաւատքը չէր, որ Միջին Դարու խարոյկները վառեց: Ճշմարիտ հաւատացեալը անտարբեր հանդիսատեսը կ'ըլլայ ուրիշի ժխտումներուն, կրօնական տարակոյտը կամ մանաւանդ կրօնական տարակոյսի սոսկումն է, որ մոլեռանդները ներ-

չնչեց» (Միւռիզիէ)։ Ահա ճշմարտութիւնը կրօնքին չափ հարկեցուցիչ ու անողորք, որ տկար հոգիներու, անհիմն հաւատալիքներու Գորդեան Հանգոյցը կը լուծէ և կը դիմակադերծէ կրօնքի ու եկեղեցիի կարգ մը soi-disant պաշտպանները, որոնց կուրծքին խորը տարակոյսէն, կասկածէն, անորոշութենէն ու սկեպտիկութենէն զատ բան մը գոյութիւն չունի։ Եւ արդէն այս երեւոյթը բացատրելու համար չէ՞ր որ Շէյքսպիրը րսաւ. «Այարոյկին այրածը չէ հերետիկոսը, այլ այն որ խարոյկը կը բռնկցնէ»։ Ներողամտութեան (tolérance) վարդապետութիւնը նախ և առաջ անհրաժեշտ է մարդկայնական տեսակէտով։ Ուրիշի անձին նուիրականութիւնը անմերժելի իրաւունք մըն է։ Պէտք է յարգենք ուրիշին կեանքը։ Ահա սկզբունքը։ Անհատին կեանքը յարգած ատեննիս, պէտք չէ մոռնանք, թէ այդ կեանքը իր մէջ կը պարունակէ իր զգացումները, իր կամքը, իր համոզումները, իր կարծիքները և իր դաւանանքը, որոնք անբաժան են կեանքէն, և որոնց հանդէպ միեւնոյն յարգանքը պարտաւոր ենք մատուցանել։ Պինդգլուխ մոլեռանդութիւնը, որ հպարտ է և միեւնոյն ժամանակ ծայրայեղօրէն յամառ, եթէ ներողութեան մարդկայնական տեսակէտը ջաւարար պատճառ մը չհամարիր իր սխալ ուղղութենէն հրաժարելու, իրեն համար կայ նաեւ կրօնական տեսակէտը։ Ենթադրենք պահ մը, թէ բոլոր անոնք, որոնք մոլեռանդներուն պէս չեն դատեր կրօնքի պատմութեան վկայութիւնները, որոնք իրենց պէս քրիստոնէութեամբ չեն դաւանիր հաւատքը, և իրենց պէս չեն ընդունիր աւանդութեան զրոյցները և կարգ ու սարքը, ենթադրենք, թէ բոլոր ասոնք անհաւատներ, անկրօններ կամ կրօնական բառով անառակ որդիներ եղած ըլլան իրենց դաւանած կրօնքին ու եկեղեցիին համար։ Պէտք է աններող ըլլալ անոնց դէմ։ Եթէ պէտք է ստոյգը խօսիլ, պէտք է ըսել, թէ կրօնքը աններող դաժնուած չէ ընաւ մէկուն դէմ. աններողութեան մոլեռանդութիւնը կրօնքի պաշտօնէութեան նեղմտութեան արդիւնքն է միայն։

Ասոր համար է, որ Միրապօ իրաւամբ գրեց. «Կրօնքին ամէնէն աւելի անսանձման աղատութիւնը՝ իմ աչքիս այնքան նուիրական իրաւունք մըն է, որ ներողութիւն (tolérance) բառը, որ այդ աղատութիւնը բացատրել պիտի ուզէր՝ ինծի այնքան ճնշող (tyranique) կ'երեւար. որովհետեւ (եկեղեցական) իշխանութիւնը, որ կը ներէ, պիտի կրնար նաեւ չներել»։ Աւետարանի ամբողջ իմաստասիրութիւնը, ամբողջ դաւանանքը այդ սկզբունքին վրայ հիմնուած է, և մարդ սոսկում կը զգայ, տեսնելով հակադրութիւնը, որ հինէն ի վեր գոյութիւն ունեցած է եկեղեցականութեան անձկամտութեան և իրապէս գիտնականներու լայնախօսութեան միջեւ։ Եկեղեցականը կրօնքը պաշտպանելու պատրուակին տակ՝ աններողութեամբ ետ կը մղէ՝ իր տեսակէտով մոլորածը, մինչ՝ անկրօն բարոյականի մարդը, աւետարանական ճշմարտութեան մարմնաւորումը

կը բերէ իր անձին և սկզբունքներուն վրայ, երբ կ'ըսէ մեզի. «Մարդ կրնայ յանցաւոր մը սիրել, և յանցաւորը ուրիշէ աւելի պէտք պիտի ունենայ սիրուելու: Երկու ձեռք ունիմ, մէկը սեղմելու համար. ձեռքը անոնց, որոնց հետ կեանքի ճամբան կը քալեմ. մյուսը՝ վերջնելու համար զանոնք, որոնք կ'իյնան: Պիտի կրնամ նոյն իսկ այս վերջիններուն երկարել երկու ձեռքերս միանգամայն»: Ինչ կ'ըսեն արդեօք մեր աններողութեան մոլեռանդները, այս խօսքերուն մասին, կիւյտի բարոյականին, որ հակառակ *sans obligation, ni sanction* մակագրութիւնը կրելուն, այնքան նուիրագործում ունի և ստիպողականութիւն, և որ Աւետարանի ողորմ չափ վսեմ է ու գեղեցիկ: Կը ցաւինք, տեսնելով, որ Հայ եկեղեցականութիւնը, ընդհանուր եկեղեցականութեան նման, ինչպէս հին, նոյնպէս մեր օրերուն, իր մէջ աւելի աններողներ ու մոլեռանդներ ունի, քան թէ իրապէս հաւատացեալներ:

ՄԱՌԵՅՎ, ԵՊԻՍԿՈՊՈՍ

## ԴԱԼԻԼԱ

Պալիպի գիրկին մէջ՝ իր գլուխը ընկելուգած՝  
Սամսոն՝ կիբիկն մեղապարհ արբուսիւնովը մըրքին  
Կը փայփայուէր Սովրեկի հեղեղաթի նայեալին  
Թունաւորիչ, տախանուտ գգուանկներէն հեճախանձ:

Մանուկի գաւալին՝ կ'ըսէր կամաց Պալիպ,  
— «Բնաւ ինձի չես սիրեր, չէ՛, կը խաբես անդուլ գիւ,  
Ուժիդ գաղտնիքը ինձմէ կը պահես միտ, պատշէլիս,  
Ինչպէս կ'ուզես որ հոգիս՝ նախանձաբեկ ալ չիլայ»:

Չանկապանք յարդարեց՝ շարժումով մը պչրավար,  
Լերդ շառայլը ցոյց տալով այդ կամացի երիզին,  
Ուր ալիքի պէս վէս վէս ժանեակներու մէջ նըրքին,  
Մարմնին հեմնակն աւելի՝ շուշանաքայր կ'երեւար:

Աչքերուն մէջ կը սուզէր, սեւեռումով դիւային,  
Ինչ մագուրիւն որ ունէր բիրբերուն խորք գիւնով,  
Հեծեծանկէն բրգացած լանջիկն վրայ սեղմելով  
Թանձրազանգուած մարմինը Մարաացի հսկային:

Անձնամասոյց ցանկութեան վայելի՛ մը մէջ, այսպէս,  
— Ուրովհետեւ կնոջը խօսքերն իրեն ծանր կուգար, —  
Սամսոն ըսաւ. — «Գաղտնիք մագերուս մէջն է երկար,  
Եթէ կտրեն՝ գիտցի՛ր որ ուժը կ'երբայ վրայէս»:

. . . . .

Պիլուն վրայ մկրտ'սն է որ կը շարժի մեղմօրէն . . .  
Ինչպէս մարմինը՝ Ուժի հեճեաքունակ հերոսին,  
Մէրն ալ ծախեց՝ Պալիպ՝ փաղաբանալով իր ոսկն՝  
Փղօսացի մեծերուն, ոսկիներու փոխարէն:

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

## ՄՈԼՈՐՈՒՄԸ

Այլ ամոքուած է մասամբ հոգիիս մէջ այն մեծ վիշտը՝ որ փոթորիկի մը պէս կը բարձրանար և որուն ուժգին ազդեցութեանը տակ կը զգայի բոլոր միանունքներու ձգտուիլը։ Ամէն անգամ որ միտքիս մէջ կը պատկերացնէի մեր բաժանման վայրկեանը, անպատմելի անձկութիւն մը կը սեղմէր կոկորդոս. բերանս կը չորնար, կոսկերս ծանր կը զգայի և մազերուս մէջ քրտինքի խոնաւութիւնը կը սարսռացնէր զիս... Ահ, երբեք պիտի մոռնամ անոր համբոյրին ջերմութիւնը, որ դեռ երեսս կ'այրէ և վերջին անգամ մատներուն ճնշումը ձեռքիս վրայ... Ի՞նչ յօշոտող, ի՞նչ արիւնոզ ցաւ մըն էր, Աստուածս. և դեռ կը զարմանամ զայն տարած ըլլալուս։

Հիմա՝ մղոններով հեռու ինձմէ որ և է պանդուկի մը մէջ՝ անտարա-կոյս իր ըրած տխմար ամուսնութեան վրայ կը խոկայ և կամ վատօրէն ընդունելով իրեն բաժին ինկած բախտը, արդէն կը խորհի կարելի եղա՞ծին չափ հանգիստ ապրիլ... Ի՞նչ փոյթ վերջապէս ալ ինծի համար թէ՛ ի՞նչ կը խորհի ինքը, թէ ի՞նչպէս պիտի կարգադրէ իր ապագայ կեանքը... Նոյն իսկ ի՞նչ փոյթ ինծի թէ երջանիկ կամ դժբախտ պիտի ըլլայ... որովհետեւ, չէ՛, իրաւ որ քաջութիւն չունիմ իրեն երջանկու-թիւն մագթելու, քանի որ ես բաժին չունիմ այդ երջանկութենէն...

Յաւը զիս բոլորովին ետսէր ու չար դարձուց. զիտեմ որ առաջին օրերու հոգեկան սաստիկ տանջանքիս միջոցին, վայրենի անասունի մը արիւնաբոս ձգտումները կը զգայի իմ մէջս և ո՛րքան կը ջանայի զա-նոնք ծածկել, ա՛յնքան խտացած կը գտնէի զանոնք իմ էութեանս խորը, առանձնութեան վայրկեաններուս։ Կը մտաբերեմ քոյրերուս սարսափը, երբ ինծի տեսնելով կ'ըսէին.

— Արուսեակ, ի՞նչ աչքեր են, տենդ ունենալու ես։

Ճշմարտիւ չարունակական տենդ մըն էր ունեցածս, որ երբեմն զիս զառանցանքներու կը մղէր. չէ՞ մի որ անգամ մը, սեղանին տակ, առանց պատճառի անզսպելի քրքիլէ մը բռնուած, սկսայ խնդալ, խնդալ, մինչև որ ուժգին հազ մը սկսաւ զիս խղդել և քոյրերս ահա-բեկած՝ ստիպուեցան բժիշկ կանչելու։ Այդ ցաւը անագին զանգուածի մը պէս կը ծանրանար հոգիիս մէջ. երբեմն հանգարտ կը զգայի ինքզինքս, աւելի ձիւղը թմրած, բայց մէկէն անիկա կը դղրդուէր մինչև որ պոռթ-կար անզսպելի ժայթքումով մը, իմ ամբողջ խեղճ մարմինս քանդելով։

Ի՞նչպէս ըսեմ. երբեմն զգայութիւնը կ'ունենայի որ խոշոր, ինքն իր վրայ վաթառուած օձ մը կը քնանայ հոգիիս մէջ և որ մէկէն բարձ-րացնելով իր ցից գլուխը՝ կը դալարուի, օղակները սեղմ և պրկուած՝ խոյանալով ամբողջ մարմինիս մէջ, մինչև որ սիրտիս խորէն զգայի թու-նաւոր խայթուածքը. և կարծես արիւնի համ կուգար բերանս...

Հետզհետէ սակայն ամօքուեցաւ. առողջութեանս տկարացման հետ  
ցաւս ալ իր ուժգնութիւնը կորսնցուց. հիմակ պարսպուած կը զգամ  
ինքզինքս և մութ բոլորովին, ինչպէս եթէ սև և անասող գիշերը եղած  
ըլլար հոգիիս մէջ առ յաւէտ:

Արշալոյսը պիտի ուշանայ, ինծի համար, Աստուծոյ, ո՞վ գիտէ.  
ե՛րբ պիտի տեսնեմ առաջին վարդագոյն գիծը հոգիիս անթափանց սև  
ութեան և սպարապութեան մէջ: Միւս կողմէ, Ֆիզիքսպէս պիտի  
դիմանամ վերածնութեան մը, ա՛հ, իրաւ որ ներքնապէս ոչ տենչանքը  
ունիմ այս բաներուն ոչ ալ այն ապրելու ուժգին կորովը, որ ամէն  
բանի կը յաղթանակէ:

Ինծի կ'ըսեն թէ չափազանց տգէոյն եմ և նիհարցած, թէ պէտք է  
սպասել դարձնին որ մօտալուտ է. չահարակները արդէն իրենց ոսկե-  
գոյն թերթիկները կը ցուցնեն ու անոնց բուրմունքին կարօտը ռնգունքս  
կը գրգռէ...: Բայց առ այժմ կարծես թէ կուրացած ըլլայի, ա՛յնքան  
ամէն բան սև կ'երեւայ աչքիս և ունայն, բոլորովին ունայն...:

\*  
\*  
\*

Օրերը կ'անցնին անօգուտ և սիրտիս մէջ ոչ մէկ ուրախութիւն չբող-  
բողիր: Երբեմն կը խորհիմ իրեն և ասիկա դառն յուսահատութիւն մը  
կուտայ ինծի: Չեմ ուզեր երեւակայութիւնս մարդել իրմով: Ինչ որ  
որոշապէս կը փափաքիմ այս միջոցին, զինքը մոռնալն է, ա՛հ, բոլորու-  
մբն մոռնալը...: Բայց, ահաւասիկ, չեմ յուսար այդ բանին...: Ամէն  
ոք շուրջս իր վրայ կը խօսի և իր գաղափարը չարունակական ձեւով մը  
կառչած է ուղեղիս. կարծես թէ գլխուս մէջ վէրք մը կայ, — իր յի-  
շատակը, իր պատկերը, — և երբ ուրիշները զիս կը զբաղեցնեն իր-  
մով՝ այդ վէրքին կը դպչին, զայն կ'արիւնեն: Ո՞վ պիտի դնէ վերջ-  
նական սպեղանին անոր վրայ...: Այլ հիմա իմ շուրջս եղող երի-  
տասարդները պարզապէս ծիծաղելի են. և ոչ մէկը, ա՛հ, ոչ մէկը գոնէ  
տասներորդ արժէքը ու կորովը ունի անոր, այն երկաթէ և անայլայլ  
կորովը, որուն զոհն եմ ես մասամբ, որովհետև ուրիշ որ և է մէկը իրմէ  
զատ՝ ապահովաբար նուաճուած կ'ըլլար և քովս կը մնար մինչև վերջը,  
մինչև վերջը...: Եթէ զինքը քովս պահել ուզէի... բայց ահաւասիկ,  
ինքը գնաց, մեկնեցաւ. և այս գաղափարը միայն զիս կը գալարէ ցա-  
ւով և ատելութիւնով:

Առանց բան մը կարենալ ընելու, ամբողջ օրը կը պտուտքիմ առնին  
մէջ և երբ գիշերները կ'երկնամ անկողինիս մէջ, կը զգամ որ ամբողջ  
մարմինս կը ցաւի՝ պրկուած և չարաչար գրգռուող ջիզերուս և նեարդ-  
ներուս ազդեցութեամբ: Ու աչքերս խռոր բացուած՝ մութին մէջ կը  
մնամ, առանց քնանալու իր պատկերը որոնելով մութին խորութիւննե-  
րուն մէջ: Ու սիրտս իրա՛ւ ատելութեամբ կը լեցուի, երբ կը  
զգամ մանաւանդ իմ բոլոր երիտասարդ անձիս անօգուտ տուայտանքը

պաղ սաւաններուն մէջ... Կարելի՞ է սիրել մէկը որ այսքան ցաւ կը պատճառէ, Աստուածս. կ'ուզէի զայն ատել բոլոր հոգւով և այնքա՛ն ուժգնօրէն՝ որ հեռուէն զգա՛ր ինքն ալ բոլոր իր մասին ունեցած չարակամութիւններու ծանրութիւնը. ու իմ ատելութիւնս իր ոտքերուն կառչէր ու սայթաքել տար զայն իր բոլոր հետեւած ուղիներուն մէջ, որ անդրադառնար ու խորհէր վերջապէս.

— Ի՞նչ բան ինծի կը հալածէ այսպէս :

Բայց... բոլոր ասոնք զառանցանքներ են և բնաւ չեն արգիլեր որ անիկա հանդարտ և երջանիկ քաղաքէ քաղաք պտտցնէ իր ձախաւեր և տգեղ կիներ :

Կարծեմ թէ իմ ցաւիս մէջ միակ մխիթարութիւնս իր կիներն է և անկեղծօրէն երախտապարտ եմ իր տգեղութեան, ինչպէս իր ձախորդ չարժուամբերուն, որով աշխարհիս ամէնէն ծիծաղելի արարածը կը դառնայ. աչքիս առաջին է միշտ իր երկչոտ և դուրս ցցուած դունչը՝ որ փախչիլ մտադրող նապաստակի մը երեւոյթը կուտայ իրեն... Ահ, խեղճ կիներ, ի՛նչպէս այն օրը իր հաւասարակշռութիւնը կորսնցուց իմ ներկայութեանս, երբ իր քովը կեցած էի իմ բոլոր անձիս արժէքին գիտակցութեամբը, մինչեւ որ Վահէ ականջիս մրմնջեց անպատկառօրէն.

— Տարօրինակ կերպով գեղեցիկ ես այսօր, սիրելիս.

Խեղճ, ողորմելի արարած, ինչպէ՛ս չուարած երեւոյթ ունէր և ինչպէ՛ս ականջները կը ցցուէին պիրկ և ողորկ մաղերուն մէջէն՝ որոնք գոնէ փայլ մը իսկ չունէին ու իր պզտիկ բիքերը անլոյս և անդոյն՝ անձկութեամբ կը պտտցնէր իմ և ամուսինին աչքերուն վրայ : Իր աչքերուն մէջ տեսայ որ վատութեամբ և երկչոտութեամբ թոյլ պիտի տար առանց որ և է ըմբոստացումի՝ որ իր ամուսինը ազրի այնպէս ինչպէս կ'ուզէ. և ապահով Վահէ օգուտ պիտի քաղէ կնոջը այդ տրամադրութենէն : Կայծակի արագութեամբ խորհեցայ. «Մարդոց բարոյականի տեսակէտով այս կինը տիպար կ'ըն մըն է. համակերպող, անշշուկ, անտրտունջ, անկարող իր ունեցածը պաշտպանելու. անիկա կը խոստանայ լաւ կ'ըն մը ըլլալ» :

Գլուխս բարձրացուցի խորխտութեամբ : Յետոյ անկիւն մը քաշուեցայ ու ժամանակս սպաննելու համար սկսայ մէկիկ մէկիկ վնտուել ներկայ եղողներուն դէմքերուն վրայ սնապարծ ապուշները, վատերը և զզուելի միջակութիւն մը յատկանշող զիծերը. անօրինակ եռանդ մը և պայծառատեսութիւն մը ունէի այդ միջոցին. աչքերս առանց իմ կամքիս կը տեսնէին, կը տարրալուծէին և կը թափանցէին կարծես. գլուխս տենդի մէջ էր սակայն և կոպերս կ'այրէին. Վահէ մօտս եկաւ նորէն.

— Արուսեակ, գէշ բաներու վրայ մտածելու ես, ըսաւ :

— Գիտեմ, ըսի հպարտութեամբ :

Մտածկոտ երեսն նայեցաւ, ուղեց ժպտիլ, կատակել, բայց քաջութիւնը պակսեցաւ իրեն, աչքերուս մէջ կը նայէր սուսուսալ ուշադրութեամբ: Վերջապէս ինքն էր որ գլուխը խոնարհեցուց:

— Ատելութիւն կայ նայուածքիդ մէջ, Արուսեա՛կ, մրմնջեց:

— Աւելի լա՛ւ, ըսել է աւելի ուժով եմ այս միջոցին:

Ճշմարտութիւնը այն է որ բնաւ ուժով չէի այդ միջոցին և իմ կորուրի ու չքեղ երեւոյթիս տակ ամբողջ էութիւնս քանդուած, անմխիթարելի և զայրացուցիչ ցաւէ մը կարծես թէ ափ մը փռչիլի պիտի վերածուէր...

Ահ, ի՞նչ օգուտ խորհիլ բոլոր ասոնց: Պէտք է ամէն բան մոռնամ, ամէն բան որ իրեն հետ յարաբերութիւն ունի:

\* \* \*

Բայց ճշմարտիւ անկարելի է մոռնալ բոլոր ասոնք: Հոգիիս մէջ այն տեսակ դառն զգացում մը կայ՝ որ կը թունաւորէ իմ ամէն մտածումս ներս: Հակառակ ինծի՝ բառերս հատու և վիրաւորիչ կը դառնան և կը զգամ որ շուրջս ամէն ոք դժգոհ է ինձմէ: Բայց ի՞նչ փոյթս, երբ բարի աղջկանս մը տեղ անցած եմ և որչափ հոգս է արդէն:

Ես կրնայի շատ երջանիկ ըլլալ և բախտը ճիշդ հակառակը վիճակած էր ինծի: Երբ կը խորհիմ բոլոր ասոնց՝ կարծես թունաւոր խայթոց մը կը զգամ սիրտիս մէջ: Ականջներուս մէջ միշտ կը սուլէ Վահէին ձայնը և ինծի կը թուի թէ այդ ձայնը երբեմն անողոքաբար իմ ցաւերս կը հեղնէ: Իմ բոլոր առողջ և երիտասարդ անձիս ուժովը զինքը սիրած էի տարիներով ու իմ բոլոր զգայարանքներովս իրեն կարօտը կը զգամ հիմա: Եթէ նոյն իսկ մտադրէի զինքը մոռնալ, աչքերս իր պատկերը պիտի ուզէին, ախանջներս իր ձայնը: Կը զգամ որ հակառակ ինծի և անկախօրէն իմ կամքէս՝ իրեն պէտքը պիտի զգամ միշտ, մինչև վերջը, և ոչ մէկ բան պիտի ազօտէ իր յիշատակը միտքիս մէջ: Երբեմն նոյն իսկ իմ ձայնիս մէջ իր ձայնին շեշտը կը լսեմ և իմ շարժումներուս մէջ սարսափով կը ճանչնամ իր մէկ շարժումը: Ես իմ բոլոր հոգւովս իրը եղած եմ և ձեռով մը իր աղդեցութիւնը իմ էութեանս մէջ թափանցած է, ա՛լ անդառնալիօրէն: Եւ երբ կը խորհիմ որ ինծի համար անկարելի է նոյն իսկ զինքը մոռնալու մխիթարութիւնը, անբացատրելի ցաւ մը հոգիս կը դալարէ: Այդ ցաւին մէջ կարօտ կայ և վիրաւորուած հպարտութիւն: Երբեմն յիմարաբար կը խորհիմ անցնիլ բոլոր պատշաճութեանց և պայմանադրական պարտականութեանց եզրերէն և ինքզինքս տալ անսահմ ու անվերջ հաճոյքի, որպէս զի անոր անունը և յիշատակը իմ թառամած և յոգնած մտքէս ու մարմինէս խոյս տայ բոլորովին: Ո՛վ պիտի մոռցնէ ինծի շնիկա: Ո՛վ կարող պիտի ըլլայ զիս հպատակեցնելու ուրիշ զգուանքի, ուրիշ փայփայանքի: Երբեք ջիղերս պիտի թրթռան ինծի անձանթ հեշտանքի մը սարսուռովը. ա՛հ, չէ՛ մի որ

նոյն իսկ ուրիշներուն մէջ Վահէն է որ պիտի փնտռեմ և զինքը պիտի դռնամ: Իր անխիղճ յիշատակը զիս պիտի հալածէ իմ էութեանս ամէն փուլերուն մէջ:

\* \*

Առտուն երբ արթնցայ, իր անունը չրթունքներուս վրայ էր և իմ ամբողջ մարմնիս մէջ եղած յոգնութեան և ջլատման զգայութենէն հասկցայ որ՝ բոլոր գիշերը զինքը երազած էի, թէ և բան մը չեմ յիշեր բնաւ: Ե՛րբ չրթունքներս իր անունը արտասանելու սովորութիւնը պիտի կորսնցնեն, ե՛րբ քիչ մը պիտի կարենամ հանգչիլ հանդարտիկ, ինչպէս ատենօք զինքը սիրելէս առաջ:

Երբեմն կը կարծեմ որ թերեւս բաւական սէր չներշնչեցի իրեն, բաւական պէտք չեղայ: Ո՛վ գիտէ, եթէ զինքը չարչարէի, զիս նախընտրէր, հակառակ ամէն բանի: Բայց ես զինքը շատ կը սիրէի և ատիկա իմ տկարութիւնս եղաւ: Հիմակ ա՛լ բոլորովին համոզուած եմ թէ՛ պէտք չէր որ յայտնէի իմ զգացումս ամբողջովին: Ինքը պէտք էր կարծէր թէ՛ ես այնքան քիչ բանով կապուած եմ իրեն որ՝ ամէն վայրկեան կրնայի հեռանալ և զինքը մոռնալ: Ահաւասիկ տխուր ճշմարտութիւն մը՝ զոր սիրտս արիւններով սորվեցայ. բայց ինչի՞ կը ծառայէ: Ինձի պէս անկեղծ և ճշմարտապէս սիրող կիները չեն որ օգուտ կը քաղեն այս տեսակ բաներէ: Վահէ՛ գիտէր որ իրն էի և ատոր համար զիս չստաւ: Բայց կրնայի՞ նաև իրմէն պահել իմ բոլոր հոգիիս դառն և վայրենի զգացումը:

Ասկէ՛ զատ, իր բարեկամներէն մէկը կ'ըսէր թէ, ոչ մէկ բան չզոհեր իր հանգստութենէն: Այն ժամանակ ուշադրութիւն չըրի այդ բառերուն. բայց հիմա կը զգամ անոնց բոլոր սարսափելի կարեւորութիւնը ինձի համար: Վահէ՛ զիս ունենալու համար երբեք նիւթական նեղութեան մէջ չպիտի մտնար: Գիտէի արդէն, ինքն ալ ըսած էր և ատ էր նաև իր անմիտ ամուսնութեան միակ պատճառը: Չէ՞ մի որ ինձի ըսաւ.

—Արուսեակ, այն տեսակ կին մըն է՝ ուրիշ նախանձեղու բան մը չունիս ապահովաբար:

Ահ, բայց թէ ինչպէս, ինչպէս կը նախանձիմ իր ոսկիներուն, իր ունեցածին համար... որ թոյլ տուաւ իրեն երջանիկ ըլլալ, մարդու կարգ անցնիլ: Չէ՞ մի որ իր վտիտ և խեղանդամ մարմինը պիտի ճանչնայ, գոնէ անգամ մը, գոնէ օր մը՝ բոլոր գերազոյն հաճոյքները... Մինչդեռ ես, ա՛հ, ո՛վ պիտի բեղմնաւորէ իմ հոյակապ կողերս... Աւելի լաւ չէ՞ ամուլ մնալ, ալ միշտ, վայրենի և առանձին ծառի մը պէս՝ որուն վրայէն փոթորիկ մը անցած է:

[Յաջորդով]

ԶԱՊԷԼ ԵՍՍԵՅԱՆ

## ՔՄԱՅՔԻ ԾԱՂԻԿՆԵՐ<sup>[\*]</sup>

-- Elle marche ! ...

Յրանսերէն բացատրութիւն մը ասիկա՝ երկու շատ տափակ, շատ դիւրին բառերէ կաղմուած, որ իր դասական և ամենօրեայ գործածութեան մէջ պարզ է... Հիւսնդանոցի Օրացոյցին պէս և կամ Քրիստինէ մայրապետին շապիկին չափ, ինչպէս կ'երևակայեմ:

Նոյն իսկ Իւսկիւտարի մէկ անկիւնը կարգուիլ ուղեւէ յոգնած բայց ուսումնատենչ վարժուհի մը պիտի կրնար անսխալ կերպով իր աշակերտուհիներուն թարգմանել ասիկա և Գրիգոր Մալխաս բարեկամս տրտնջալու առիթ մը չպիտի կրնար ստեղծել:

Պարկեշտօրէն և հաւատարմարար եթէ պէտք ըլլար թարգմանել այդ երկու բառերը, յետին գաղղիագէտը պիտի ըսէր. — Elle marche, կը ֆայե կոր...:

Սխալ է սակայն:

Marcher բառը երբեմն շատ կանոնաւոր, շատ պարկեշտ բայ մըն էր, որուն վրայէն երթալով միւռօնը կը պակսի կոր:

— Elle marche...

Շարաթներէ ի վեր կուտուիմ կոր այդ բացատրութիւնը հայացնելու համար, բայց ամէն անգամ որ գրիչս ձեռք կ'առնեմ, ինծի այնպէս կը թուի թէ դէմս կայներ է... Թաւշանձեանը... որթի տերեւ մը ձեռքին մէջ:

Մաքսանկնգներն ալ ասանկ են: Ծխախոտի հակ մը փախցուցած միջոցնուն անպատճառ նշմարել կը կարծեն Ռէժիի փոքի մը:

Ուրեմն՝ contrebanded զատ ուրիշ միջոց չի կայ: Tant pis. արդիւնքներ կան որ միջոցները կ'արդարացնեն:

Արդ, Տեարք իմ և Տիկնայք, Յրանսացիք ընդհանրապէս և մասնաւորաբար Բարիւղցիները երբ կնկան մը համար՝ elle marche կ'ըսեն, ճիշդ այն ըսել կ'ուզեն ինչ որ հասկցնել կ'ուզեն մեր ոսկերիչ եղբայրները երբ կնկան մը վրայ խօսած միջոցնուն չարամտօրէն կ'աւելցնեն. — «Լսածիս կ'օրէ այդ կնիկէն հաց կ'եղլայ կ'ըսեն կոր»:

Ուրկէ ո՞ր հաց եղլալը այդ բանը պիտի նշանակէր:

Սակայն ընդունուած, հուրիւրագործուած բացատրութիւն մըն է աս՝ որ կրնայ անծանօթ ըլլալ Դուրգէնի մը, բայց շատ ընթացիկ ասացուած

[\*] Հրատարակելով Մասիսի մէջ Յ. Ալիարի այս առաջին անտիպ գրուածքը, հանոյքը ունինք զոհացում տուած ըլլալու բազմաթիւ ընթերցողներու, որոնք Մասիսի բոլոր ծանօթ ականաւոր աշխատակիցներուն քով՝ կ'ուզէին գտնել նաև Հայ անգլագական ֆանդէզիսը:

մըն է աս ամէն անոնց համար՝ որոնք Ոսկեդարու զրաբարէն աւելի այս աշխարհիս բաներով կը զբաղին :

Ըսելու ձեւն ալ կայ որ շատ կը փոխէ բառի մը նշանականութիւնը : Օրինակի համար, ամէնէն բարձր, ամէնէն աղնուական սալօնի մը մէջ կրնաք *marcher* բառը դործածել առանց որ և է դայթակղական իմաստ մը տալու անոր :

Երբ գլուխնիդ շիտակ կը բռնէք և առանց grimaceի, բնական կերպով կնկան մը համար կ'ըսէք. «Madame X., d'après les conseils de son médecin, marche régulièrement deux heures par jour».

Ատկէ աւելի պարկեշտ բան մը կարելի չէ ըսել :

Բայց երբ մէկ ձեռքերնիդ բանթալոննուդ գրպանը կը դնէք և միւս ձեռքով ձեր ժամացոյցին շղթային հետ կը խաղաք, միւս կողմէ ձախ աչքերնիդ կը գոցէք և չարածճիօրէն հատիկ հատիկ կ'արտասանէք ձեր բառերը և կ'ըսէք.

—Tiens! je ne mettrais pas la main au feu, mais d'après ce que l'on dit dans le monde, il paraît que Madame X... marche...

Հոս տեղ ալ քաշելու խնդիր չի կայ :

*Marcher*ն իր ուրոյն նշանակութիւնը կորսնցուցած է և պարզապէս կը նշանակէ Թէ Տիկին այսինչէն բացէ ի բաց հաց կ'եղայ կոր :

Ալ կնիկ չէ ան, այլ... փռռռն :

Ասանկ նուրբ լեզու մըն է ասա՝ ֆրանսերէնը :

Պարկեշտօրէն արտասանուած, *marcher* բառը քաշել կը նշանակէ. իսկ երբ ձախ աչքդ կը գոցես... հը՛մ, հը՛մ :

*Marcher* բառին մէջ սուռջ ոտքի դադափար մը կար. իսկ ժամանակէ մը ի վեր մի միայն... կռնակի :

Առաջ կին մը միս մինակը կրնար փաշել : Հիմակուան կլնները փաշելու ելլալուն պէս՝ անպատճառ մէկու մը պէտք ունին :

Առաջ կլնները քալած ատեննին երբեմն կ'իյնային. հիմա ինկած կլններն են որ ամէնէն շատ կը քալեն :

Առաջ քաշելու համար կօշիկ կը հագնէին. իսկ հիմա տիկինը կրնայ քալած ատենը կօշիկները հանել, եթէ... ժամանակը կը ներէ :

Երբ կնկան մը ետեւէն կ'երթաք և անիկա յանկարծ ետին կը դառնայ ու կանգ կ'առնէ, ըսել է Թէ... կը քալէ կոր :

Հին, բարի ժամանակները կին մը քաշել չուզելու համար, ապահովապէս կամ կօշիկները շատ նեղ ըլլալու էին և կամ ոտքին վրայի կոշտերը շատ դժայուն :

Այսօրուան օրս, կամ միջոցները շատ նեղ ըլլալու են և կամ կին մը շատ դժայուն ըլլալու չէ որ ըսէ ձեզի.

—Non, Monsieur, je ne marche pas.

## ԳՐԻԳՈՐ ՊԱՏՈՒԵԼԻ ՓԷՇՏԻՄԱԼՃԵԱՆ

—○○○○—

[ԼԵՍԱՆՔԸ ԵՒ ԳՈՐԾԸ]

Դ.—

Ժէ. Դարու կէսին, Երուսաղէմ, Ժողովի մը մէջ, գումարուած 1651ին, ուր ներկայ էին Էջմիածնի Փիլիպպոս կաթողիկոս, Սիսի Ներսէս կաթողիկոս, Երուսաղէմի առաջնորդ՝ Աստուածատուր վարդապետ, Կորնուլի որ «Մի՛ համարձակեցի՛ ոք վարդապետ՝ անխորաբար տալ զիշխանութիւն վարդապետութեան ամենայն ումեք, եթէ ոչ իցէ նուիրեալն կատարեալ ուսմամբ և առաքինութեամբ և հասակաւ և աստուածայնով երկր-դիւ և վկայեալ յամենեցունց եւայլն»։ Կ'ըսուի թէ՝ այս Ժողովէն ինը տարի վերջը (1760) քահանայ մը, Տէպէճեան անուն, կը յօրինէ զիրք մը, որուն մէջ շօշափած է Հայ. Եկեղեցիին բարեկարգութեան խնդիրը և գոված՝ Արևմուտքի բարեկարգիչին զիւցազնութիւնները։ Ռուսական և Բրիտանական Աստուածաշունչի Ընկերութեանց ձեռնարկները ընդունելութիւն և նպատակը գտնեն Հայ. Եկեղեցիին բարձրագոյն շրջանակներուն մէջ։

Եփրեմ կաթողիկոս նամակով մը՝ զոր կ'ուղղէ ռուսական Աստուածաշունչի Ընկերութեան նախագահին, կը գովէ ազդու բառերով ընկերութեան պատուական նպատակը։ Թիֆլիզի առաջնորդ՝ Ներսէս եպիսկոպոս (որ յետոյ կաթողիկոս եղած է Եփրեմի յաջորդելով) նոյն Աստուածաշունչի ընկերութեան կը նուիրէ 600 ռուպլ (=իւր 156 օսմ. ոսկի)։ Ուրիշ բարձրաստիճան եկեղեցականներ ալ կը հետեւին իր աղնիւ օրինակին։ Գալով Թրքահայերուն՝ 1823ին Կ. Պոլսոյ մէջ Բրիտանական Աստուածաշունչի Ընկերութիւնը զրուած է 5000 օրինակ Նոր Կտակարան և 3000 օրինակ ալ միայն չորս Աւետարանները պարունակող հատորներ։ Այս ընկերութեան խնդիրը — ձեռնարկել աշխարհաբար Նոր Կտակարանի նոր տպագրութեան — Կարապետ Պատրիարքի կողմէ հաւանութեան և աջակցութեան կ'արժանանայ։ Այս արթնութիւնը՝ որ տեղի կ'ունենայ Ժէ. դարու կէսէն, յատուկ չէր այդ ժամանակին։ Հայ Եկեղեցիին ծոցին մէջ մերթ ընդ մերթ պատահած են այս տեսակ կրօնական արթնութիւններ, կեանքի լաւագոյն յարացոյցով մը հրաւիրուած։ Հայ միտքը, ի բնէ պարզասէր և կրօնասէր, յաճախ ընդլղումներ ունեցած է այն յետամուտ, օտարամուտ ծէսերուն, վարդապետութեանց դէմ՝ որոնք զանազան կերպերով մտած են իր եկեղեցիին մէջ։ Այս համառօտակի յառաջ բերուած իրողութիւններէն կը հետեւեցնենք որ Ընծայարանի հաստատութիւնը ժամանակին պահանջն էր, ունենալու համար հոգեւոր անձեր, որոնք բոլորանուէր փաբէին իրենց եկեղեցական պաշտօնին, զայն խզմտօրէն կատարելով։ Ընծայարանին հիմնադիրները

սակայն կը բաղձային ոչ միայն հոգեւոր, այլ և ուսեալ եկեղեցկաններ ունենալու և այս էր Ուսումնարան-Ընծայարանին երկրորդ նպատակը: Հոս փակագիծ մը բանամ, խօսելու համար այդ ժամանակի բարձրագոյն կրթութեան և անոնց վրայ՝ որոնք պատճառ եղած են Կ. Պոլսոյ մէջ աւանդելու բարձրագոյն ուսումներ:

Յակոբ Նալեան, աստուածաբան-իմաստասէր Պատրիարքն է որ՝ ԺԷ. դարու կէսին՝ կը հիմնէ Գում-Գափուի մէջ Մայր-Դպրատունը, ուր իրմէ զատ կը դասախօսէր համբաւաւոր Պաղտատար դպիրը: Մայր-Դպրատունը Գում-Գափու չհաստատուած՝ Իւսկիւտաբի մէջ կ'արդարաց մը՝ զոր հիմնած էր Նալեան Պատրիարքի հոգեւոր ծնողը, Յովհաննէս Կոլոտ Պատրիարքը, տեղին Երուսաղէմի վանքին մէջ, որ այն ժամանակ Հոգեւորն[<sup>1</sup>] կը կոչուէր. աս՝ յատկացուած էր նախապէս՝ էջմիածնի նուիրականերուն և Երուսաղէմի միաբաններուն: Յովհաննէս Կոլոտ Պատրիարք իր հոգեկցորդ գործակիցին՝ Գրիգոր Շղթայակիրին՝ հետ «Յոյժ կատարեալ ունէր զփիլիսոփայական և զաստուածաբանական գիտութիւն» (Հաննա, էջ 133): Դպրոցին մէջ գրատուն մըն ալ կը հաստատէ, ուր կը հաւաքէ նախնեաց գործերը և յետոյ թարգմանել կուտայ ուրիշ լեզուներէ աստուածաբանական և փիլիսոփայական գիրքեր (Նոյն, էջ 154). թարգմանիչն էր Ղուկաս Վ. Արքահայրնայն Սարրերոյցի, որ քաջ հմուտ էր իտալերէն և լատին լեզուներու. ասոր 10 հատոր թարգմանութեանց մէջ (Հաննայ, էջ 158) յիշենք միայն մեծ մասը Կովդէնի փիլիսոփայական գործերուն[<sup>2</sup>]. զորս յետոյ Տ. Վրդանէս Վ. Ասկէրեան թարգմանած է աւելցողիկն Կոլոտի դպրոցին մէջ աշակերտները կը զարգանային «կրկնակի գիտութեամբ, այսինքն փիլիսոփայականք և աստուածաբանականք» (Հաննայ, էջ 155): Յովհաննէս Կոլոտ՝ որուն հետ կը սկսի Կ. Պոլսոյ իմաստասիրական և բանասիրական զարգացման թուականը, Գրիգոր Շղթայակիրին հետ աշակերտներն էին Բաղէշի Ամրտպու վանքին վանահայր Վարդան վարդապետի. այս երբեմնի ծագեալ վանքին մէջ ստացած էին իրենց ուսումները. կ'արժէ հիշուել այս պարագան և յիշեալ վանքին մտաւորական զարգացման սատարող դերը: Կ. Պոլսոյ գրական զարգացման սատարող ուրիշ ազդակ մըն ալ կայ, ոչ նուազ կարեւոր քան առաջինը: Համբաւաւոր Թադւոր վարժապետ Ասլանեան որ քաջ հմուտ էր, ի մէջ այլոց, տրամաբանութեան (Ա. Պէրպէրեան) աշակերտն էր Կեսարացի Պաղտատար դպիրին. այս վերջինն ալ որ Գում-Գափուի մէջ Նալեան Պատրիարքի հաստատած Մայր-Դպրատան մէջ ուսուցչութիւն ըրած է, այս կրթասէր Պատրիարքին յրած գրաւ

[<sup>1</sup>] Այս Հոգեւորնն էր որ յետոյ 1838ին ձեմարանի վերածուեցաւ:

[<sup>2</sup>] 1. Դոճիզա (==տրամաբանութիւն) 2. Ֆիզիզա (==բնաբանութիւն) 3. Մէթաֆիզիզա (==համարնաբանութիւն) 4. Բարոյական:

գեճն էր և աշակերտած էջմիածնի նուիրակ Ֆահրապառցի Աստուծատուր Աղաւնի կողմած վարդապետին. այս ուսեալ եկեղեցականը էջմիածնէն իբր նուիրակ Պօլիս գալով 1706ին՝ նախ սկիզբը կը դնէ փլիսոփայական և բանասիրական ուսումներու<sup>[1]</sup>: Դարձեալ՝ կը պատմուի թէ՛ Սիմէոն Վ. Երեւանցի՝ որ էջմիածնի «Ակադեմիային մէջ ուսած և դասախօսած էր, Պալատիւ Ս. Հրեշտակապետ եկեղեցիին «քարեայ խուց»ին մէջ հասակաւոր աշակերտներու կ'աւանդէր (1753) «Պորփիւրի հինգ ձայնը»: Այսպէս էջմիածին և Ամրտպու վանքը կ'ըլլան երկու աղաւակները Կ. Պոլսոյ դրական բարձրագոյն զարգացման: Հաճելի չէ՞ դիտել հոս թէ՛ էջմիածին, որ իբր կրթական աղղակ ժամանակագրական կարգով առաջնութեան փառքը կը խլէ, իբր հոգածու և գորովալիր մայր իր վտարանդի զաւակներուն կը ջամբէ ոչ միայն հոգեւոր, այլ և իմացական մեծնալ, արդարացնելով այս կերպով իր մայրութեան սրբազան կոչումը: Պահ մըն ալ քննենք՝ տեսնելու թէ՛ էջմիածնի և Ամրտպու բարձրագոյն ուսումներու վերջնաձեւումը՝ որչափ մեծ հնութեան կրնայ վերանալ և թէ՛ զարգացման այս երկու կեդրոնները. ի՞նչ աղերս ունեցած են իրարու հետ:

[Յաշորդով]

ՄԻՆԱՍ ՄԱՆԱՆ

[\*] Այս գրաւէր վարդապետը այլպէս ալ օգտակար եղած է. իննն է առաջին հրատարակիչը, Կ. Պոլսոյ մէջ, Ս. Գաբրաէլեղոսին (1709ին):

## Վ Ե Ն Ե Տ Ի Կ

ՉԻՖԹԻՆԱՍԻՐԱԷԻՆ

Երազի մը մէջ սիրոյ ընկղմած է Վ. Ե. Ե. Տ. Ի. Կ.  
Վ. Ե. Ե. Տ. Ի. Կ. կը լայնեայ օրագրիծին մէջ ոսկեայ.  
Կը բխրեղման ծիրանի ջինջ ջուրերը նրբալիք:  
Կօնօյնները իրիկուան կը հեռանան ծրփալէն:  
Ս. Ե. Ե. Տ. Ի. Կ. ակադեմիական օրագրիծները միացած՝  
Համալսարանի հոգիին նուրբ սարսուռը կը ծրծեն:

Պատգամէն կ'երկարին ձայներ սիրոյ ծառաի,  
Ջուրերու վրայ բեւաժող սիւրբ կուգայ հեռալէն՝  
Ու տարօրէն կը բերէ տա՛լ օրգիններէն հարալի:

Ալիքները հեռօրօր կօնօյններուն կը վազեն՝  
Երեկոյեան գեփիւսին ցանկալարայց հպումով:  
Կիբառները արեւին կապոյտներուն կը պարզեն:

Վ. Ե. Ե. Տ. Ի. Կ. ցոլներուն քրքաւցումին տակ Միւսէ՝  
— Սիրախաւուր փերթի նրբասուէ՛րը քալածաղէմ—  
Կնոջական սէրերու դժբախտ երգը կը իլաւէ:

Երազի մը մէջ սիրոյ ընկղմած է Վ. Ե. Ե. Տ. Ի. Կ.  
Վ. Ե. Ե. Տ. Ի. Կ. կը լայնեայ օրագրիծին մէջ ոսկեայ.  
Կը բխրեղման ծիրանի ջինջ ջուրերը նրբալիք.

Երազի մը մէջ սիրոյ ընկղմած է Վ. Ե. Ե. Տ. Ի. Կ.:  
ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐԵԱՆ

## ԵՂԻԱՅԻՆ ՄՈՒՐԱԼԸ

Այն պահուն ուր կը պատմեն թէ մեր անդուգական Եղիան, հիանալի սթիլիսդը, յաւերժական գեղապաշտը, լայնախոհ ու լայնսիրտ մարդ-կայնասէրը, կը ճուայ ու կը տուայտի կեանքի հոսակ յետին ջղապաշարումներով, — հալածուելական երկարատեւ հիւանդութենէ մը վերջը որ կարծես միտքով մեծերուն բաժինն է եղած դրեթէ՝ միշտ, — աղիճ-ներու փողոցի մը ետին նայող անշուք սենեակի մը խորը, ուր լանթեր-նային ու ինկած գինով կլներու երգերուն մեղամաղձոտ վանկերը ու գանգիւնները կուգան մարմիրը, այն պահուն ուր կ'ըսեն թէ հէք օրհասական Եղիային դեռ կենդանի կ'ախքը, չորցած ու փակչոտած մորթին մէջը հազիւ պարտկուած, ստուերի մը նմանած, գրեթե ուժը կորուսած, ամիսներէ ի վեր լեզուն առնուած, սնունդ առնելու անկարելիութեան մասնուած, կսկծալիօրէն կ'ալեկոծի աւելի խոշորցած գլուխի մը ու խո-ժողած նայուածքի մը ծանրութեան տակ ու անկողինին ճերմակ ծած-քերուն կոհակային ծալքերուն մէջ, երբ կը նկարագրեն ուրուականի այն գլուխը ու լայն ճակատը՝ ճերմկած մազերով ու խուռացած մօրուքով շրջանակուած, միշտ սե ու սուր աչքերու արհաւիրացի արտայայտու-թիւնով մթնցած, ամէն վայրկեան, կարծես ոգեւարային պայքարի մը մէջ արձակուած հռչակներով խելըռած, որ գրգռուած ու միանգա-մայն անկարող իմացականութեան մը յետին տապալիւմներուն մէջ կը պտուտքի ու ձեռքերուն հետ տխուր ու անեղ մնչկատակ մը կը ձեւա-ցնէ՝ ցոյց տալով յար, իր դրադարանը՝ զոր լախեր է, գերեզմանի մը հեռագատկերը՝ ուրիշ պիտի անցնի և երկինքը՝ ուր պիտի երթայ հանգ-չիլ քիչ ատենէն, երբ կ'ըսեն վերջապէս թէ անոր օրերը, թերեւս ժա-մերն ալ համրուած են, և պէտք է պատրաստ ըլլանք առտու մըն ալ անոր մահուան, — աղատումին, — գոյժը, — աւետիսը, — առնելու, չեմ կրնար չյիշել ասկէ աւելի քան տասներէնգ տարի առաջուան Եղիան որ Զատիկի աւտուանցով մը կը մուրար մեր ժամուն դուռը, միեւնոյն լանթերնաներու շինդէն ու գինովի երգերուն խառնաձայնէն քիչ հեռու:

Այդ պատահարը այսօրուան սերունդէն չատերը կ'անգիտանան, անոր համար թերեւս որ անիկա ժամանակին խենդութեան մօտ բան մը նկատուելով, աւելի պատշաճ սեպուած է բնաւ չխօսիլ անոր մասին հրապա-րակաւ և չյիշատակել դայն երեք:

Այդ թուականին դպրոցական էինք դեռ և այն ամէն բաները՝ որոնք կ'իյնային մեր աչքերուն տակ, մեր հետաքրքրութիւնը կ'արթնցնէին, առանց մինչեւ մեր դատողութեան հասնելու, որ դեռ նոր կը սկսէր կազմուիլ ու ճշտորիլ: Բոլոր իրերը ու դէպքերը իրենց արտաքին երեւոյթէն կը դատէինք և աւելի աչքով կ'ըմբռնէինք, — եթէ կարելի է

այսպէս ըսել, — քան թէ միաբով : Ասոր համար է որ Եղիային մուրալուն այդ եղական պատկերը, զոր տեսնալու բարեբախտութիւնը տրուեցաւ ինձ ունենալ, այն ատեն, զիպուածին բերումովը, *objectif* մէջ, անշինջ կերպով յաւերժացած ջինջ ու աչքառու լուսանկարի մը պէս կենդանի դժուած կը կենայ աչքին խորը, միտքիս առջեւ, առանց դատումի ու *commentaire*ի :

Զատիկի կիրակի առտուն մութուն եկեղեցի. դացեր էինք և խուռն բազմութեան մը մէջ, ժամերէ ի վեր տեւող հանդիսաւոր արարողութիւններու հանդէպ յագնած ու շլացած միանգամայն կեցած էինք, շատ մօտ պատարազի աւարտելուն, երբ տաճարին մեծ դուռին մօտ ուր կը գտնուէի ես իսկ, նշանակալից խլրտում մը, երթեւեկ մը, ձայնարկութիւններ ու ապշութիւն մը ծայր կուտային և շատերը դուրս կը խուժէին : Առաջին դուրս ելլողներէն էի ես ալ և այդպէսով առիթը ունեցայ այդ նորանշան տեսարանը իր գեղեցկութեան ու լրումին մէջը վայելելու :

Եղիան, որմէ տակաւին չորս օր առաջ դաս առած էինք և որուն միտքի հաւասարակշռութեան վրայ որ և է կասկած չէինք տածեր, հոն՝ փողոցին դուռին առջեւ, ուրիշ մուրացիկներու, խեղանդամներու, դժբախտներու տխուր վեհմակին խառնուած կը մուրաբ : Ուրիշներ ապշահար կամ վախկոտ, հեռու կը կենային ու կը դիտէին, կարծես մտածելով որ խելագարած ու մուրացող. այդ քաղքենին կրնար յանկարծ իրենց վրայ ցատքել ու ճիտերնուն փաթտուիլ :

Ես անհոգ ու անկասկած, առանց հասկնալու բայց գուշակելով որ մեծ նշանակութիւն մը կրնար ըլլալ այդ անօրինակ ու *original* արարքին տակ, կը մօտենամ իրեն :

Առանց ծուլի Փէս մը, ճմրթկուած ու ետեւ նետուած է, որուն տակէն մազի խռուացող խուրձեր դուրս կը յորդին, լայնածաւալ ճակատին վերեւը շքաւորելով : Շապիկ, օձիք, փողկապ չիկան. թրիքօ շապիկ մը միայն՝ վերեւը լայն բացուած, ուրիշ ալ դէպ ի վեր, վիզին կողմը կը ցայտէ ոլորուն մաղերու բազմութիւն մը : Վրայէն՝ հին բարաբրեւան, մութ կանաչորակ ու չկոճկուած : Մաշած բանթալօն մը՝ որուն վարի ծայրերը կը մխուրն պատառատուն կօշիկներու վերնամասին մէջ : Զեռքը թէթեղէ կախարիչ մը պղտիկ, որ և է ամանի մը վրայէն առնուած անշուշտ, որուն մէջ հինգ փարանոց մը և փոկեղի կտոր մը կը սլքտան : Գետինը յառած աչքերը, որոնք կը զգան կարծես *incognito*ին պղծուիլը ու տգէտ բազմութեան մը հետաքրքրութեան առարկայ դարձած ըլլալը, կը քամեն փսոր փսոր եղած պղտիկ աղամանդէ այն արցունքներէն՝ որոնք իրեն կարծես միայն յատուկ են և որոնք իր դէմքը լուսաւոր ու խուսափուկ գլծով մը պայծառացնելով կ'երթան թաղուիլ թաւ ու սև մօրուքին բաւիղին մէջ :

Մեր դպրոցին անօրէնը ու թաղին յարգելի աղաները կը փութան քովը կ'երթան, բացատրութիւն կը խնդրեն, կը թախանձեն որ վերջ տայ այդ գայթակղալից տեսարանին, կը ջանան համոզել զինքը, մինչդեռ ինք, միշտ անխօսուկ, անդրդուելի, արտասուալից, իր թիթեղէ կափարիչը կ'երկարէ իրենց և ողորմութիւն կը խնդրէ:

Վերջէն չեմ գիտեր ինչ եղաւ: Ժամկոչները եկան ցրուել մեզ: Տասը վայրկեան վերջը, Եղիային ճամբան կը սպասէինք արդէն, զինքը կրկին տեսնալու անձկութիւնով, երբ հեռուէն կը տեսնանք գոցուած լանտօ մը որ վսեմ մուրացիկը կը բերէ դէպ ի մեզ:

Լուրը կայծակի արագութիւնով կը տարածուի թաղին մէջ և արդէն իսկ խնթութեան խօսքերը իրենց գլուխը առած կ'երթան, երբ Եղիան կէսօրին մօտ, կարծես հակադէցութիւն մը առաջ բերելու և ջնջելու համար այդ սխալ կարծիքը, կը տեսնայինք որ մաքուր հագուած, աւանդական ուրտէնկօթը կունակը, լուսդրին կօշիկներ դրած, փողփողուն փողկապով ու ցլիկը ձեռքերուն մէջ խաղցնելէն, ճաշի կ'երթար մեծ աղային տունը, ուր յատկապէս հրաւիրուած էր:

Եւ ըսին թէ հոն բացատրութիւններ է տուեր իր արարքին մասին: Երբ ներսը հանգիստօր արարողութիւններ կ'ըլլային տօնելու համար խեղճերուն ու ինկածներուն Աստուծոյն Յարութիւնը, երբ պատարագներ կ'ըլլային, երգեր կ'երգուէին, փառաբանութիւններ կը գոռային, ցոյցէր բոլոր, արտաքին շողշողուն երեւոյթներ մեծատուններու, մեծամիտներու ի սպաս տրուած, ինք դուրսը իր անձին, իր արժանապատուութեան, իր սիրտին պատարագը կ'ընէր, խառնուելով խօթացածներուն, խեղճերուն, ինկածներուն, անժառանգներուն և այդպէս կը հասկնար ու կը հասկցնէր Բրիստոնէութեան ոգին զոր չափէն աւելի մոռցուած կամ խաթարուած կը նկատէր ինք:

Մարդկայնական ինչ աղնիւ ու վեհ ցնորայուսութիւն:

Հէք Եղիա: Ոգեւարի այս վերջին մէկ քանի օրերդ թող կարճ ու քաղցր ըլլան քեզի համար, չորս պատերուդ մէջ ուր քեզ անձնուէր օտարունիէ մը զատ ոչ ոք ունիս վրադ գուրգուրացող, լանթերնայի տխուր լանկրտութներուն մէջ, զորս քու տեսլապաշտ ու պատրանքի ծարաւի հոգիդ Պէթովէնի քու այնքան սիրած, սարսուղդեցիկ մահերդդ կը կարծէ թերեւս, և ինկած կիներուն լալկան եղանակներովը օրօրուելով, որոնք տարիներ առաջ քու արձակած հաւաչդ կ'արձակեն հիմա, Ժողովրդական գուհիկ երգի մը ձեւին տակ, «Անանքըմ, պանս նե օշ-սու օա պեճ պիլիմեմ . . .» և որ հիմա, հրեշտակներու համերգած մեղեդիի մը պէս կը հնչէ ականջիդ ապահովաբար, որոնք քու վշտահար ու վերացող հոգիդ կ'առաջնորդեն սիրեցեալ մայրիկիդ խանդակաթ հոգիին քով:

Հէք մեծ մարդ:

ԶԻՖԹԷ-ՍԱՐԱՖ.

Համոյնով կը ներկայացնենք Մասիսի ընթերցողներուն՝ Ռօպրոդ Գօլքնի նախկին Տնօրէն՝ Տօք. Ճօրն Ռօօպրօքնի նախորդ երեւոյթի օր Սկիւսա. ռի Ամերիկեան Աղջկանց Վարժարանի ամսականի հանդէսին մէջ ըրած տեսնախօսութիւնը, մէկը իւր այն գեղեցիկ հառերուն, զորս ա՛յնչափ հմտօրէն գիտէ խօսիլ ծերունազարդ մեծանուն դաստիարակը, անոնց մէջ դնելով մեծարեւելի հեղինակաւորութեան մը եւ լայնամիտ իմաստասիրողի մը շունչը՝ որ կը յանկուցանէ ընթերցողը, խորապէս քելադիր է ու հօգօր իւր ազդեցութիւնովը ու սպաւորութիւնովը :

## ԿԻՆԵՐՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Պիտի համարձակիմ ներկայացնել ձեզ այսօր քանի մը նկատողութիւններ կիներու դաստիարակութեան մասին : Ձեզի կը մնայ այնքան կարեւորութիւն միայն ընծայել այդ նկատողութիւններուն, որքան կ'արժեն իրր այդ մարդու մը տեսութիւնները այս նիւթին նկատմամբ : Այնքան քաջայայտ պիտի գտնէք անոնցմէ ոմանք, որ բաւական պիտի ըլլայ լոկ յիշել զանոնք :

Դաստիարակութիւն ըսելով կ'իմանամ դպրոցական դաստիարակութիւն : Դպրոցական կրթութիւնը ո՛չ ամբողջն է եւ ո՛չ ալ ամէնէն կարեւոր մասը դաստիարակութեան : Ինչպէս կ'ըսէ Քառլայլ. «Այն դաստիարակները եւ դպրոցական հրահանգութիւնները որոնք յատկապէս կը սահմանուին մեզի համար, գրեթէ ոչինչ են բաղդատմամբ դիպուածական եւ շարունակական հրահանգութիւններուն, որոնց դպրոցական ժամերը մեր կեանքին բոլոր օրերն ու գիշերներն են, եւ որոնց դասերը մեր գիտութեամբ կամ առանց մեր գիտութեան, մեր վրայ կը տեղան ամէն հունձքի հետ՝ զոր կը հնձենք» : Կնոջ մը դաստիարակութեան վերջնական արժէքը երբեք չի կրնար չափուիլ թիւովը այն տարիներուն, զորս դպրոցներու մէջ անցուցած է. ո՛չ ալ կրնանք յուսալ թէ աղջիկներու բարձրագոյն վարժարանները պիտի արտադրեն կիներ՝ աւելի կատարեալ քան ուրիշ կարգ մը կիներ, որոնք այդ տեսակ վարժարանի մը կամ համալսարանի մը մէջ մուտք գտած չեն երբեք : Ինչ որ կը հաւատանք՝ սա է թէ՛ կրթական բարձրագոյն հաստատութիւնները պարզապէս պիտի նպաստեն այդ տեսակ կիներու թիւը բազմապատկելու եւ անոնց աղղեցութեան շրջանակը ընդլայնելու : Դպրոցական դաստիարակութեան մասին է միայն որ ես այսօր ժամանակ ունիմ խօսելու :

Յայտնի է թէ կին մարդը այնքան բնական իրաւունք մը ունի դպրոցական դաստիարակութիւն մը ստանալու, որքան այդ մարդը : Ինքն ալ օժտուած է նմանօրինակ հնարաւորութիւններով : Ունի միւսք մը որ ընդունակ է զիտնալու, ղգալու եւ կամենալու, ընդունակ դարգանալու մարդանքի միջոցով : Եւ իւրաքանչիւր անհատի բնական իրաւունքն

է, անտարակոյս, պատեհութիւնը ունենալ կանոնաւորապէս զարգացնելու այս կարողութիւնները դպրոցներու օժանդակութեամբ. և ոչ մէկ ողջամիտ անձ տարակոյս կը յայտնէ այս իրաւունքին մասին: Կին մարդուն դաստիարակութիւնը նոյն մեծագոյն նպատակին պէտք է ծառայէ, ինչպէս այր մարդուն դաստիարակութիւնը. այսինքն՝ նկարագիրի քառձրագոյն կարելի զարգացումը: Դպրոցին գլխաւոր գործը հրահանգութիւն է: Իր գործին մէկ մասն է նաև օգտակար ծանօթութիւններ համբարել ուսանողին միտքին մէջ: Բայց այս ծանօթութիւնները գրեթէ բոլորովին կը մոռցուին չուտով, և դպրոցին մէջ չէ, գէթ դասատուներէն չէ, որ սորված ենք մեծագոյն մասը այն գիտութեան՝ զոր կը գործածենք գործնական կեանքի մէջ: Այնքան ճշմարիտ է աս որ՝ ընդհանուր կարծիքը այն է թէ՛ անոնք որ չպտ քիչ դպրոցական կրթութիւն ստացած են, աւելի տիրացած են այս օգտակար գիտութեան, որ ողջմտութիւն կը կոչուի առ հասարակ, քան դաստիարակուած անձերը: Մեծագոյն դպրոցականները ամէնէն անգործնական, ամէնէն անձեռնհաս մարդիկն են յաճախ: Դպրոցին կարեւոր գործն է մարզել և զարգացնել դպրոցականին ֆիզիքական, իմացական և բարոյական կարողութիւնները: Այս կարողութիւնները կը գտնուին արդէն մանուկին մէջ: Աստուծոյ պարգեւն են անոնք: Դասատուին գործն է ի յայտ բերել զանոնք, մշակել, ներդաշնակել, համաչափութեամբ զարգացնել, այնպէս որ ստորինը հպատակի բարձրագոյնին, այնպէս որ կամքը սովորի բարձրագոյն շարժառիթը ընտրել աւելի, քան թէ ստորինը: Ծանօթ իրողութիւն մըն է թէ՛ բնազդը և ունակութիւններն են որ կը կառավարեն մեր գործողութեանց մեծագոյն մասը: Մատաղ տարիքն է այն ժամանակը՝ երբ կրնան բնազդները չափաւորուիլ և մեր իշխանութեան ենթարկուիլ. և կը կազմուին ունակութիւններ որոնք մեր կեանքին տեւողութեան միջոցին չեն բաժնուիր մեզմէ: Երբ կ'ըսենք թէ հրահանգութիւնն է դպրոցական դաստիարակութեան գլխաւոր առարկան, և իր նպատակն է աղջկան նկարագիրը ձուլել և կատարելագործել, ինկատի ունինք կազմութիւնը այն ունակութիւններուն, որոնք իր գործողութիւնները պիտի որոշեն ապագային մէջ: Այս հրահանգութիւնը կրնայ մասնակի ըլլալ և միակողմանի. և այդպէս ալ է յաճախ: Ան կրնայ մասնաւորաբար ուղղուիլ ֆիզիքական կարողութիւններու, ուր մարմնամարզը կը գրաւէ առաջին դիրքը և կամ մարմինին բարեձեւութիւնը կը նկատուի իբր ամէնէն կարեւորը: Կրնայ, ինչպէս յաճախ կը պատահի, իմացական կարողութիւններու միայն յատկացուիլ. ուսանողութեան, երեւակայութեան, դատողութեան, ունակութիւններ կաղմելու, իմացական կորուլը ուռձացնելու: Պէտք չէ անտես ընել զանոնք: Ունակութիւնները որոնք առողջութիւնը կ'ապահովեն, չնորձը ու գեղ կ'ընծայեն անձին. և անոնց հետ մէկտեղ կորուլի միտքը՝ կարող կեանքի հար-

ցերը ըմբռնելու և քննասիրելու, թանկագին բարիքներ են: Բայց անոնցմէ աւելի և անոնցմէ բարձրագոյն բան մըն է զոր կ'իմանանք նկարագիր ըսելով: Կ'իմանանք Չգաղութները և Կամքը, այն կարողութիւնները՝ զորս բարոյական կը կոչենք: Անոնք են որ կ'իշխեն անհատին կեանքին վրայ, իր նկարագիրը կը ձեւացնեն և ճակատագիրը կը հաստատեն: Այս կարողութիւններուն հրահանգութիւնը, կամքին կրթութիւնը, կազմութիւնը այն տեսակ ունակութիւններուն՝ որոնք Աստուծոյ կամքին պիտի համակերպեցնեն անհատին կեանքը. ա'հա այս է բարձրագոյն և ճշմարիտ գործը դպրոցին, և այս դաստիարակութեան է որ կը կարօտին հաւասարապէս այրեր և կիներ:

Յաճախ կը յեղցեղուի ներկայ ժամանակին մէջ, կնոջ Ազատագրութիւնը դաստիարակութեան միջոցով: Աս չի նշանակեր Ազատագրութիւն այն պարտաւորութիւններէն, որոնք իր սեռին կը վերաբերին կամ իր վիճակին՝ կեանքի մէջ: Եւ ոչ մէկ ճշմարիտ կին կը փափաքի ազատագրուիլ այդ պարտաւորութիւններէն: Թէ՛ կին մարդուն և թէ՛ այր մարդուն համար պարտաւորութիւնները աւելի կարեւոր են քան իրաւունքները: Գաստիարակութիւնը պէտք է ազատագրէ կինը այն դժուարութիւններէն, որոնք խոչնդոտներ են իր պարտաւորութիւնները գիտակցաբար և խնդութեամբ կատարելու ճամբուն մէջ: Ինչպէս ըսի արդէն, դպրոցը մէկն է միայն այն ազգակներէն, որոնք դաստիարակութեան կը նպաստեն: Աւելի կարեւոր ազգակ մըն է, հաւանականաբար, ընտանիքը, և կնոջ գործն է, գլխաւորաբար, ընտանեկան դաստիարակութիւնը: Թէ՛ ի'նչ պիտի ըլլայ այդ դաստիարակութիւնը՝ ատ միծ մասամբ կախում ունի ընտանիքի մօր նկարագիրէն: Ձի կրնար ուրացուիլ թէ՛ հայրն ալ ունի իր կարեւոր բաժինը այս գործին մէջ, բայց ընդհանրապէս խօսելով, ճշմարիտ է որ աւելի զօրաւոր է մօրը ազգեցութիւնը բարին կամ չարին մէջ: Կրնանք յարել նաեւ թէ՛ եթէ ան հուժկու նկարագրի տէր կին մըն է և շրջահայեաց, աննշան դեր մը չէ որ կը կատարէ իր ամուսինին դաստիարակութեան համար ալ: Ամէն դասատու իր փորձառութեամբը գիտէ թէ՛ իր լաւագոյն ջանքերը յաճախ պարապը կ'ելլեն ընտանեկան աննպաստ ազգեցութիւններու պատճառով. և թէ բարի մայրն է իր ամենալաւ դաշնակիցը: Ամէն երկրի մէջ մարդիկ կը սկսին վերջապէս համոզուիլ թէ՛ կարելի չէ ազգի մը նկարագիրը բարձրացնել, որչափ ատեն որ մայրերը զուրկ են դաստիարակութենէ, և հետեւաբար, զուրկ իրենց արժանի դիրքէն: Ազգի մը բարեւ լաւութեան գործը պէտք է սկսի կիներէն, որոնք պէտք են այնպէս կրթուած ըլլալ, այնպէս մարդուած, որ կարենան իրենց ամուսիններուն և զաւակներուն յորգանքը և վստահութիւնը վայելել, որ կարենան սորվեցնել թէ՛ իրենց խօսքերովը և թէ՛ իրենց օրինակովը, և գլխաւոր փորձառաբար թէ՛ ի'նչ տեսակ դաստիարակութիւն յարմար պիտի ընէ

իրենց զաւակները իրենց կեանքովը պատուելու զԱստուած, ծառայելու Պետութեան, ինչպէս նաև բուն իրենց երջանկութիւնը ապահովելու։ Կիները այս տեսակ դիրքի մը պատրաստելու համար է որ դպրոցներ և բարձրագոյն վարժարաններ բացուած են իրենց համար և որչափ ատեն որ այս նպատակին կը ծառայեն, որչափ բազմաթիւ ըլլան այս տեսակ հաստատութիւնները, այնքան աւելի լաւ, բաւական է որ հաւատարիմ ըլլան իրենց կոչումին։

Մինչև հոս ոտնձգութիւն չըրի այն տեսակ սահմաններու մէջ, ուր մարդ պէտք է վախճայ կոխել։ Այնքան վստահ չեմ զգար, սակայն, իմ ապահովութեանս մասին այս խնդիրներուն մէջ՝ որոնց նկատմամբ դեռ կը մնայ ինձ խօսիլ։ Կը խոստովանիմ թէ ո՛չ ինձ և ո՛չ ուրիշ որ և է այր մարդու անկ է որոշել թէ՛ ինչ աստիճանով և ինչ եղանակով պէտք են դաստիարակուիլ կիները դպրոցին մէջ։ Թէև մենք այրերս անտարբեր չենք կրնար ըլլալ այս խնդիրին մասին, քանի որ մեր անդորրութիւնը և մեր երջանկութիւնը մեծ մասամբ այս հարցումին տրուած պատասխանէն կախում ունի բնականաբար։ Կան անտարակոյս շատ մը գործնական հարցեր, որոնց՝ կիները միայն կրնան պատասխանել հեղինակօրէն։ Ես պիտի համարձակիմ միայն թելադրել երկու ընդհանուր սկզբունքներ, որոնք կարեւոր կը թուին ինձի։ Նոր չեն այս սկզբունքները, և կիրարկուած են արդէն այրերու դաստիարակութեան մէջ։ Ահաւասիկ այդ սկզբունքները։ Կիներու դաստիարակութիւնը պէտք է հետեւի բնական օրէնքներու և պէտք է նկատի առնէ միջավայրը։ Բացայայտ իրողութիւն մըն է թէ՛ նոյնը չեն այրերը ու կիները։ Տարբեր ուղղութիւններով կազմած է զանոնք բնութիւնը։ Խնդիր չէ յարաբերական արժանիքը, հաւասարութիւն կամ գերազանցութիւն, այլ տարբերութիւն մըն է միայն։ Մէկ ունկի ոսկին կրնայ ունենալ նոյն ներքին արժէքը, զոր ունի քսանըջինգ ունկի արծաթը, բայց նոյնը չեն երկուքն ալ. տարբեր մեծաւորներ են։ Այլանդակութիւն մըն է այրերու և կիներու յարաբերական արժանիքին խնդիրը յուզել։ Բայց թէ կը տարբերին իրենց ֆիզիքական և իմացական կազմակերպութեան մէջ, բնութեան մէկ պատգամն է աս, զոր ո՛չ կարելի է ուրանալ և ո՛չ խափանել։ Գաղափարական այրը շատ տարբեր էակ մըն է գաղափարական կիսէն։ Գաստիարակութեան նպատակն է զարգացնել կնութեան բարձրագոյն տիպարը այրերուն մէջ։ Երբ շիորձենք անտես ընել այս տարբերութիւնը, հետեւանք կ'ըլլայ որձեւէգ մը, ո՛չ այր, ո՛չ կին, ողորմելի հրէշ մը։ Ոչինչ ունի իր մէջ գաղափարական՝ առնացի կինը կամ կանացի այրը, ո՛չ մէկը և ո՛չ միւսը կրնայ հակառակ սեռին յարգանքը վայելել նոյն իսկ։ Դանի որ գոյութիւն ունի կազմութեան և գաղափարական այս տարբերութիւնը, անոր բնական հետեւութիւնը աս կը թուի ըլլալ թէ՛ կիները պէտք են այրերէն քիչ շատ տարբեր ուղղութեամբ դաստիարա-

կութիւն մը ստանալ, և այդ դաստիարակութիւնը ընդունին զլիաւորաբար կիներէ, ճիշդ ինչպէս առ հասարակ ընդունուած է թէ, որոշ տարիքէ մը վերջը, այրերը պէտք է բարձրագոյն վարժարաններու և համալսարաններու մէջ իրենց դաստիարակութիւնը ընդունին զլիաւորաբար այրերէ և պէտք չէ ըսել թէ մեծ սխալ մը կը գործեն աղջկանց վարժարանները՝ երբ մանչերու վարժարաններու օրինակին կը հետեւին կապիօրէն, կամ ուսումններու ծրագիրին և կամ ուսանողներուն վարժմունքներուն ու սովորութեանց մէջ, որոնք շատ հեռու են կանացի ըլլալէ, և յաճախ նաև հաւասարապէս հեռու առնացի ըլլալէ, որոնք երբեմն նախատինք մըն են քրիստոնէական քաղաքակրթութեան:

Յօժարակամ կը խոստովանիմ թէ դժուար խնդիր մըն է կանացիութեան զարգացման յարմարագոյն ուսումններու ծրագիրը որոշել, և դեռ կարելի չէ եղած գոհացուցիչ լուծում մը տալ այս խնդիրին: Իմ համոզումս այն է թէ՝ կիներուն կը պատկանի իրենք իրենց համար գտնել այս լուծումը, և իրենց միտքէն փարատել այն բոլոր նախապաշարուածները որոնք կրնան ծագիլ մարդոց առած որոշումներէն թէ՝ ինչ յարմարագոյն է ճամբարիտ կանացիութիւնը զարգացնելու համար: Եւ պէտք չէ դժուար ըլլայ աս, քանի որ այրերու մէջ կարծիքի այնքան տարբերութիւն կայ թէ ինչ է որ լաւագոյնն է մեզ համար: Յայտնի պիտի ըլլայ թերեւս, թէ անհրաժեշտ խտրութիւնները պէտք չէ վնասել այնքան այն նիւթերուն մէջ որոնք կ'ընտրուին իբր պատշաճագոյն՝ իմացական հրահանգութեան համար, որքան այդ նիւթերը ուսուցանելու և ուսանելու եղանակին մէջ: Ամէն պարագայի մէջ ճամբարիտ պիտի ըլլայ միշտ կիներու ինչպէս այրերու համար, թէ կարեւորագոյն ազդեցութիւնը դաստիարակութեան մէջ՝ ուսումնասիրուած նիւթերը չեն այնքան, այլ անձնականութիւնը դասատուին. և այս պատճառով է զլիաւորաբար՝ որ կը սնդեմ թէ կիները պէտք են ըլլալ կիներու դաստիարակները:

Միւս ընդհանուր սկզբունքը զոր թելադրեցի, այն է թէ կիներու յատկացուած դպրոցները և վարժարանները նկատի ունենալու են իրենց միջավայրը. սկզբունք մը՝ որ հաւասարապէս կը պատշաճի այրերու վարժարաններուն: Չկայ դաստիարակութեան այն տեսակ դրութիւն մը՝ որ կատարելապէս պատշաճ ըլլայ ամէն ժամանակի և ամէն երկրի. և այն դաստիարակութիւնը, որ անյարմար կ'ընէ աղջիկ մը ապրելու այն միջավայրին մէջ, ուր պիտի վիճակի իրեն իբր կին տպրիլ, բարիք մը չէ ո՛չ իրեն և ո՛չ ընկերութեան: Ինչ որ յարմար է Ամերիկայի, կրնայ անյարմար ըլլալ Թուրքիոյ համար: Ինչ որ յարմար է Գերմանիոյ համար, կրնայ անյարմար ըլլալ Պուլկարիոյ կամ Յունաստանի համար: Գիտեմ թէ Ճարոնի մէջ կայ աղջկանց դպրոց մը որ լատիներէնի ամբողջ դասընթացք մը կը պահանջէ իր բոլոր ուսանողներէն: Ատիկա

ինքնին բաւական է դատապարտելու այդ դպրոցը։ Անտես ըրած է ան իր միջավայրը։ Վարժուհին կրնայ շատ դժգոհ ըլլալ միջավայրէն, մասնաւորաբար եթէ օտարուհի մըն է։ Բայց իր պարտաւորութիւնն է դաստիարակել իր խնամքին յանձնուած աղջիկները, այդ միջավայրին մէջ ապրիլ այն տեսակ կեանք մը, որ նոր լոյս պիտի բերէ հոն առանց դանոնք բաժնելու անկէ, որ օգտակար օրինակներ պիտի հանդիսացնէ զանոնք այն համայնքին՝ որուն անդամներն են, ոչ օրինակներ՝ զորս անկարող են ըմբռնել։

Աւելորդ է բացատրել թէ ինչ որ ըսի այս սկզբունքին նկատմամբ, չի պատշաճիր բարոյական հարցերուն, որոնք անշուշտ պէտք է գտնուին ամէն միջավայրի մէջ։ Բարոյական օրէնքը մեր ստեղծագործութիւնը կամ հնարքը չէ։ Աստուծոյ օրէնքն է ան։ Եթէ դպրոցը հաստատուած է հասարակութեան մը մէջ, ուր ստախօսութիւն, նենգութիւն կամ անբարոյութիւն կը թոյլատրուին առ հասարակ, դասատուին պարտքն է, անտարակոյս, սորվեցնել աշակերտներուն՝ Աստուծոյ երկնչիլ և իր պատուիրանքները պահել։ Աս՝ սկիզբն է իմաստութեան ամէն միջավայրի մէջ։ Բայց կան շատ պարագաներ, որոնց այս սկզբունքը կը պատշաճի կատարելապէս։ Կարելի չէ հաստատել թէ որ և է մասնաւոր քաղաքակրթութիւն հասած ըլլայ այն տեսակ կատարելութեան մը որ իր ձևերը, կրթական օրէնքներն ու սովորութիւնները պարտաւորիչ ըլլան բոլոր աշխարհի։ Յաւանդիրմութեան նշան չէ այս տեսակ աշխարհաքաղաքացիութիւն մը։ Եթէ ճիշդ յար և նման ըլլային իրարու բոլոր հասարակութիւնները և ազգերը, աշխարհ պիտի կորսնցնէր իր շահեկանութեան մէկ կարեւոր մասը և ազգերն ալ պիտի կորսնցնէին իրենց ինքնութիւնը։ Զանազանութիւնն է բնութեան կարգը և իր գեղեցկութեան մէկ տարրը։ Դպրոցին պաշտօնը չէ զանազանութիւնը վերածել միօրինակութեան, այլ, յաւէտ իր միջավայրին ազգային ոգիին, պայմանադրութիւններուն ու սովորութիւններուն պատշաճիլ և զանոնք կարելի եղածին չափ օգտակարապէս գործածել։ Այդ փոփոխութիւնները, որոնք էական են կիներու դիրքին համար այս տեսակ հասարակութեան մը մէջ, պիտի հետեւին ինքնաբերաբար, պիտի հետեւին աստիճանաբար այլ անվրէպ, որքան որ դաստիարակուած կիներու թիւը աճի և անոնց գերազանցութիւնը ճանչցուի։

Կիները չպիտի տիրանան երբեք իրենց իրաւացի ազդեցութեան որ և է միջավայրի մէջ բռնութեամբ և գոռում գոչումով։ Բայց դարուս ոգին կը գործէ իրենց ինպաստ։ Յաջողութիւն կը մաղթեն իրենց բոլոր բարի ու ճշմարիտ մարդիկ։ Այդ յաջողութիւնը սակայն կախում ունի այն իմաստութենէն որով կիները իրենք կարող պիտի ըլլան ըմբռնել թէ ինչ են իրենց իրաւունքները և ինչ իրենց պարտաւորութիւնները, և այն ուշիմութենէն ու խոհեմութենէն որով կարող պիտի ըլլան համաձայնեցնել զանոնք այրերու իրաւունքներուն ու պարտաւորութիւններուն։

## ՎԱՐԴ-ԱԶՔ

Գարնան անոյ՞ժ օր մըն էր,  
Օր մը գարնան օր գոհար,  
Թռչունն՝ յերկնից՝ սրտաւար  
Իջաւ ոստին վրայ յերեւ,  
Դերել ունկն խմ եւ աչեր :

«Միքէ զունոյ եւ բուրման  
Նրդ մը չե՞մ ես», մնջեց վարդ,  
«Թէ չունի՞մ զոյգ թեւ երպարս,  
Չունի՞մ բիւր թերթ այգամման»:  
Ու աչկունքս վարդին յառեցան:

Թռչունն ոստէն խոյս տրաւ,  
«Չոյգ խմ աչեր քո զեղոյն  
Չը բաւէին, ո՞վ թռչուն.  
Վարդն ինձ աչք մը քրեցաւ»:  
Ահ, յամենուս արթս ցաւ . . . :

ԵՂԻՍ. ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

## ԼՈՒՍԱՆԿԱՐԸ

Ձեռքիս մէջն է, կը դիտեմ գայն երազուն,  
Լուսանկարն այդ ժպտադէմ պզտիկին,  
Միակ ապրող յիշատակը կարողին  
Մանկութեանս անգիտակից օրերուն:

Շղարհներու եւ ժանեակի ձիւնեղէն  
Թաւալափուկ զրգանքին մէջ պարուրուած,  
Կը ժպտի միշտ անմեղօրէն, անկասկած՝  
Յայտնուած զինքը կարող իրերէն:

Իր նայուածքը՝ հառազայրի տատան,  
Չէ աղօտած երբեք ցաւի իւրախալ  
Արցունքով մը տենդայոյզ. իր հոգին ալ՝  
Անմեղութեան վեհ տունակ կիւտական,

Ջոր չէ յուզած կեանքի ցնցող ոչ մէկ վիշտ,  
Կը բարախէ խօլ ու փճոտ տենչերով.  
Տղու հոգին այդ մանկունակ, անվրդով,  
Այն, ո՞ր էր որ կարեւորին պահել միշտ:

ՊԵՐՃՈՒՂԻ ԵԱԶԸՃԵԱՆ

## “ԳԼՈՒԽՍ ՊԵՏՔ ՈՒՆԻ ՈՒՍԻԴ,”

Իրիկուան դէմ, Բերալի Մեծ-Պաղատան թափառողներ, յաճախ կը տեսնեն արտասովոր անցորդ մը, որ ամբոխին հոծ ու խառնիճաղանճ ցանցը ձեղքելով, փութկոտ քայլերով կ'առաջանայ, կիսախուփ իր իմաստուն աչքերը յառած հեռաւոր հորիզոնի մը անհունութեան, գրաւուած անծանօթ երեւոյթի մը դիւթական տեսքէն, զոր միայն ինք տեսնէ, որովհետեւ անկէ՝ յափշտակուած, կը թուի զայն հետապնդել, ակնարկը չբաժնելով երբեք անկէ, վազելով անոր ետեւէն, և զոր սակայն չի գտներ: Անցորդները կը ցանցաւան, ճամբաները կը հատնին, բայց ան չի՝ հասնիր անոր: Ի՞նչ կը վնասէ այս արտասովոր անցորդը, որ զանազանութեան ուշագրաւ նիշ մը կը դնէ աննպատակ ամբոխին մէջ, անմիջապէս դատուելով անկէ, անմիջապէս աչքի զարնելով, ամբողջ խառնակ այլազանութեանը մէջէն բազմազունակ մարդակոյտին, ուր մարդկային ցանցին ամէն հիւսկէնը կը տիրէ, ամէն առէջք իր գոյութիւնը սպրդեցուցած է հոն, կազմելու համար այն ամբողջութիւնը, որ ամբոխն է:

Մոլորած ուղեւոր մըն է ան, որ տարաշխարհիկ բնավայրերէ քայլերը խոտորեցուցած ըլլայ անծանօթ ճամբաներու մէջ, ուր կը թափառի իրիկունները, գտնելու համար անել ու կորսուած այն ուղին, որ շեղեցուց զինքը իր ընտանի երգիքէն, զոր, անձկոտ ու անստոյգ, գտնել կը ջանայ, հոն հասնելու և գլուխը անոր հովանիին տակ հանգչեցնելու համար, թռչուններու պաճիկէն առաջ:

Ո՛չ, մոլորած ուղեւոր մը չէ՝ ան, անծանօթ մը չէ՝: Ու ատոր համար իսկ՝ ապո՛ւշ՝ գործը այն անցորդներուն, որոնք զարմացական ու հետաքրքիր նայուածքներ կը ձգեն այս ուշագրաւ անցորդին վրայ, երբ ան շուքի մը պէս կը սահի կ'անցնի իրենց քովէն, աննիւթական, լպրծուն ու օդային ուրուականի մը պէս, անմիջապէս անհետանալով:

Անբաժան շուք մը ունի իր ետեւէն այս զարմանալի անցորդը, որ չի կորսնցնիր երբեք անոր կրուկներուն հետքը, և մոգական ստուերի մը պէս, խուսափուկ ու հալածական, կը հետեւի անոր, ո՛ւր որ անոր քայլերը երթան:

Գլխէն ի՞նչ հով է անցեր այս անցորդին, որ չուառութեան բիրտ փոշի մըն է ձիւներ անոր վրայ, ոտքէն մինչև գլուխը, իր զաւկոցած ու աղաղուն մարմինը հազիւ կ'ամփոփուի հինութեան փոշիովը զօծուած չքոտի հանդերձանքով մը, և իր հանճարի յոլքովը ճառագայթուն գլուխը կը ծածկէ ծերացած ֆէս մը, որ ժամանակին մաշող ակունեւրուն տակ, ձերմկեր ու պրկուե՛ր է ալ, ամբսներով անկաղապար մնացած կոնաձև դադաթ մը ցցելով իր գանկին վրայ:

Վշտակիր փրկիստիա՞յ մըն է արդեօք այս խոհուն թափառողը, որ իր մենարանին անկիւնէն իջած է, մօտէն լսելու մարդկային սիրտին բաբախումները, ականջ դնելու անոր երախներուն իւրաքանչիւր զարկին, — որովհետեւ իր տեսքը եզական հակադատներ մը կը կազմէ ըստոր անցորդներուն հետ, և ինք անոնցմէ ո՛չ մէկուն կը նմանի, սխալ միջավայրի մէջ ինկած օտարականի մը պէս:

Կամ արդեօք Բանաստիւլի և Ուրուվիլիւի անտառներուն ուխտեալ քո՛ւրմ մը, որ Նուիրական Գաղաքը իջած է, աչքէ անցընելու իր աղանդաւորները:

Նոյն ինքն: — Ներվանաի ջերմեռանդ նոր առաքեալն է այդ արտասովոր անցորդը, Նզիա Տէմիրճիպաշեանը:

\* \* \*

Կացութիւնը որուն մէջ կը գտնուի<sup>[1]</sup> այսօր Տէմիրճիպաշեան, անմոռանալի նշանակութիւն մը ունի, և հեռու է պատուաբեր նիշ մը ըլլալէ իմացական ժողովուրդի մը պատիւի ճանաչումը երաշխաւորող յատկութենէն:

Արժանիքի երախտահատոյց ըլլալու առաքինութեան պակասը և գերեզմանէն ետքը համակրութեան ցոյցեր սարքելու ունայնամիտ փութկոտութիւնը՝ միշտ մեր երեսին զարնուած է իրր անպատուաբեր ունակութիւն մը, զոր մեր ժողովուրդը սիրած է անուցանել սկիզբէն ի վեր, մտաւորական ամէ՛ն վաստակաւորի հանդէպ, և որուն անձնատուր եղած է ան հոգեւին:

Զգել որ Տէմիրճիպաշեան մը ձերմկոտած, անկաղապար ֆէտով, և թափթփած հագուստով մը պտտի, ինչ որ իր կեանքն էր քիչ ատեն առաջ, ամէն ակնթարթի ենթակայ օտարակոյններու հետաքրքրութեան և գիտողութեան, իր՝ Հայ Դրականութեան ամէնէն կարեւոր ու եզական դէմքի մը հանգամանքովը, ճրիա՛բար ստանձնել է պատիւ չունենալու այն ստոյգ վիճակը, զոր ժողովուրդի մը կարեւոր մէկ անդամին այդպէս լքուած ու երեսէ ձգուած պարագան կրնայ ծնցնել առանց այլ և այլի:

Աղէկ որ, այն ժողովուրդէն, որուն մէջ ապրեցաւ հանճարեղ գրադէտը և որուն վրայ ճառագայթեց անսգիւտ իմացականութեան մը թանկագին ցոլքերը, մեծոգի ազգական մը, մեծանձնական աղնուութիւնը ունեցեր է անոր ապրուստը հոգալու փրկարար հոգը ստանձնելու, անոր յատկացնելով ամսական 5 ոսկի, զոր կանոնաւորաբար կը ստանայ ճակատագրապէս տարաբախտ մեծ կարօտը:

[1] Մզիսն ծանր հիւանդ է, օստրուիի մը բնակարանին չորս մուշ պտտեռուն մեջ: Մերիկներէն ո՛չ մէկը կը փութայ իր բովը: Անհայ գրական օտոս մը ձեռագիրներ ունի, գրաւուած իր խնամակալութիւնէն: Մեր մէջ որի՞ վրայ պարտք պիտի դնէինք կորուսէ փրկել զանոնք: ?

Այլապէս, կը մտածեմ թէ, ի՞նչ տեսակ ապաւենի մը պիտի յանձնէր ան ինքզինքը, — երբ զինքը մինչև այս վիճակին մէջ տեսնելէ ետքն ալ, անյողգողդ անտարբերութեան մեր հեշտաւէտ դիրքէն չենք շարժիր մենք, կարեկցելու համար գրական անձնազոհ աշխատաւորի մը, և զայն մեր գուրգուրոտ թեւերուն սիրտիարար բոյնին մէջ առնելու համար:

Ապահովաբար, այս ընթացքով, այս անգամ պիտի դատաւարտէինք զինքը ժամուն դուռը աղքատներուն համար մուրալու իր մեծիմաստ գործքը, բիրտ իրականութեան մը վերածելու, իր անձին հոգին փոխանցելով զայն:

Ատեն մը, առողջ և հիւանդ գրականութեան խնդիր մը յարուցուեցաւ, որով անչքացնել կ'ուզուէր կարեւորութիւնը իր արժանիքին և գործին: Այդ հարցը խնդրական է, և անիմաստ է պահանջել հեղինակէ մը, որպէս զի, անսաստելով իր հոգեկան արամադրութիւններուն, գրական մշակումի իր գործը առողջ ձգտումի մը վրայ բեւեռէ: Մասնաւոր ուր, այս հարցին մասին արդէն Տէմիրճիպաշեան անվերաբողքելի իր պատասխանը տուաւ ժամանակին, բժիշկի մը, բացատրելով հոգեբանական պատճառը այդ երեւոյթին, և զայն ուղղակի հետեւութիւնը նկատելով հոգեկան այն ընդհանուր դրութեան, որ ծնունդ կուտայ գրականութեան այդ ձեւին:

Թող որ, ո՛ր և է պարագայի, վեհանձն գործ չպիտի ըլլար, չնչին առարկութիւնով մը, լքել և մոռնալ գրագէտ մը, որ ամբողջ կէս դարու սերունդի մը մտաւորական ամէնէն փայլուն ջանք եղած է, զայն առաջնորդած Լուսաւորութեան ձամբաներուն մէջ, անոր հոգին յուզած յանկուցիչ գրիչի մը ուժեղ մոգականութիւնովը, և գրականութիւնը սիրցուցած՝ անբաղդատելի կերպով բարձր աստիճանով մը:

Մեր այս անգութ մեկուսացումը, չտարբերի ո՛չ մէկ կերպով նողկալի վատութենէն այն տարփամոլ սիրահարին, որ իր սիրուհին թարմատի կեանքին ամբողջ հիւթը և գեղեցկութիւնը ծծելէ ետքը, երբ կը ցամքեցնէ անոր հրուտ երակներուն կենսաբաշխ առուգութիւնը, և ան ա՛լ խամրած ծաղիկ մը կը դառնայ, մերկացած իր բոլոր գիւթական գեղեցկութիւններէն, կը լքէ զայն առանց վարանքի ու խղճահարութեան, յանձնելով հովին քմայքին, չնչին փետուրի մը պէս գետին նետուած:

Տխուր հեգնութիւն մը չէ՞, մեր երեսին բիրտօրէն նետուած, որ այսօր Տէմիրճիպաշեանը հոգացողը, անոր վրայ մտածողը, անոր ամէն արտասովոր քմայքին խաղացողը օտարուհի մը կ'ըլլայ, որ հազար կտոր կ'ըլլայ, զայն ձեռքէ չփախցնելու համար, և գուրգուրանքներուն ամէնէն փափուկովը, ամէնէն փափայլիչովը կը պարուրէ զայն, վայրկեա՛ն մը չի ձգելով անոր հագուստին ծայրը:

Ահա վերջապէս շատո՛նց ի վեր քօղարկուած այս յայտնութիւնը

ընկու խիղախելէ չեմ երկնչիր, աչք առնելով դիպուածը, որ, երբ վաղը դարձեալ երթամ զարնել այն դուռը, ուր յաճախ եղիան տեսնելու, իր խաթրը հարցնելու կը փութայի, այդ անվախ կինը այս անգամ թերեւս դուռը զոյցէ երեսիս, կամ նոյն ինքն եղիան սրտմտի, իր ա'յնչափ սիրելի Տկն. Նիսընը վիրաւորուած տեսնելով: Նուիրական ուխտազնացութեան մը հաճոյքը եղած էր ինծի, տարիներ առաջ, Հիւանդանոցը եղած ատեն, իրեն այդ այցը, երբ հիւանդ էր, կամ ետքէն, ատենը, որովհետեւ ա'յնչափ կը զգածուէր իր անտեսումէն, պարագայ մը՝ որմէ կը գանգատէր միշտ, յուզիչ բողոքի մը շեշտովը:

Ձէ', այս մոռացումը, այս մեկուսացումը անգութ է, և անպատուաբեր մեղի, գրական աշխատուորի մը հանդէպ՝ որ եղիան է:

Օր մը հոչակաւոր pamphlet մը հրատարակեց եղիա, Հիւանդ էի, եկիք ճեսիք գիս աստուածաշնչական մեծիմաստ բնաբանով, որ օտար կնոջ մը իրեն յատկացուցած խնամքին փառաբանութեան ձեւին տակ, լուեղեայն ապրտակի ուժգին շառաչ մըն էր մեր այտերուն արձակուած, և ուր մեծ հեզնարանը, իր օիրական եազոտարային ուղղուած անմահ խօսքով մը կը փակէ իր վշտալի կսկիծը ու լացը. — Գլխուս մարդ պէճֆ չունի. գրոյսս միայն պէճֆ ունի ուսիդ ուր հանգչի: Այս լուռ անարգանքը գրականութեան արժէքը ճանչցողներուն կ'ուղղուի, աստիճան մը իրաւունքով, որովհետեւ երբ մենք իրմէ երես կը դարձնենք, օտարունի' մը կը գտնէ եղիա, իր «գլուխը անոր ուսին հանգչեցնելու»:

Օհ, գրագէտին այդ անարգանքը չատ ծանր է ու անտանելի: Պէտք չէ՝ որ հանդուրժել ուղենք անոր: Անմոռանալի վէրք մը կը բանայ ան սիրտերու, վաղը, երբ գերեզմանը փակէ կեանքը հոյակապ գրագէտին:

Այն փափուկ ուսը՝ զոր եղիա կը փնտռէ իր յոգնաբեկ գլուխը հանգչեցնելու համար, անձանօթ օտարունիի մը խորթ ու այլամերժ ուսը պէտք չէ՝ որ ըլլայ, այլ մտերիմ ու կարեկից ուսը՝ կազմուած ամբողջական անկեղծ ու խանդաղատ սէրովը այն համայնքին՝ որուն չքնաղ զաւակն է ինք:

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

## ՆՈՐ ԳԻՐՔԵՐ

### ԽԻՍԱԾԱՆ. — ՄԻՍԱԲ ՄԵԾԱՐԵՆՑ-Ի

Բանաստեղծութեան պզտիկ հատոր մը՝ կուգայ երեւան բերելու իրական արժանիքով նորահաս բանաստեղծ պատանիի մը ներշնչումները, իր տաղերը արեւոտ են, հակառակ ընդհանրապէս վերջալոյսներ ըլլալուն, և բանաստեղծը, ինչպէս ամէն հիւանդ, արեւին է կարօտ, կազդուրիչ սիւզերու, ծագիկներու բոյրին, ծովուն աղի զաղջ համբոյրին, նախշուն ուղիներուն, իր գործին մէջ ապագայ ճշմարիտ արժէքաւոր բանաստեղծի մը յատկանիշները ամէն տեղ ի յայտ կուգան, իր ներշնչումները կ'երեւան աղամանդեայ շողիւններով, կեղծ երեսաւոր ապակիներու շրջանակի մը մէջ, իրիկնամուտներու այս սիրահար գրողին մէջ առաջին բանը որ կը նշմարուի, բնութեան սէրն է, Այդ սէրը և զգացողութիւնը անոր շքեղութիւններուն՝ զինքը կը մղեն ճշմարտապէս սիրուն գրաւան գիւտերու երանաւետ իրիկուն մը կը ժպտի հեղինակին բիչ մը մեղմաղձոտ «Միրերգ»ին մէջ.

Համբոյրներ կուգան հովէն ու ծովէն.

Այս տողը կրնայ տիպիկ փափուկ բանաստեղծը, Բնութեան նկարներուն մասնակից կ'ըլլայ նաև իր հոգին, որ թէ և չունի խիստ խռովումներ, բայց ունի անորոշ քողածածուկ յուզումներ, Հագիւ երբեմն կը յանգզնի երգելու բնութեան սէրէն զատ, իր սէրը՝ «Յայգանուգ»ին սկզբնաւորութիւնը սիրուն է և «Շերամին Նինջ»ը վայելք մը. հոն գիւտ ալ կայ, ներշնչում ալ, և մանաւանդ իրականութիւն.

Հիմզ աղջիկներ հուսկ օտոր պիտի երգեն  
վաղ գիշեր.

Այդ տեսակ օրօրի մը բանաստեղծին հոգին ալ կը կարօտի, անցողակի վիշտերու յուսահատ պահերուն.

Երկու բոցէ քեներու մէջ ծովանկարն  
է սխալի:

Անտուան Արեւին մէջ տուն մը ամբողջ  
կը փորձուիմ մէջ բերել.

Հառազայքներ խուսափուկ

Լինեալուն մէջ կը խաղան.

Եւ յանկարծ քոյր մը դերձան

Կը ներկէ շուր փափուկ:

Մեծարենց շատ ունի այս տեսակ նկարներ, փափուկ, ինքնատիպ.

«Այդերգ»ը գաւառիկ պատկեր մըն է և բանաստեղծը վերջին ծայր բերրի միտք մը ցոյց կուտայ գաւառիկ պատկերներու նկարումին մէջ, «Աքախաներու Շուքին Տակ»ը ներգաշնակ բանաստեղծութիւն մըն է, իրապէս զգացուած, Այդ զգացողութիւնը չէ՞ որ կը մղէ Ծիածանի հեղինակը «Գետափի Երազանք»ին մէջ ըսելու.

Գետն համբոյրի մը երազով դէպի փութն  
կը քեփի:

Հակառակ իր հոգիին անկնճիւղ ազուցումին, խոհուն, խորհրդածուած վանկեր ունի, որոնք կ'ըսեն թէ զարգացումի հակամէտ միտք մըն է Ծիածանի հեղինակը և կեանքի դառնութիւններ՝ կրնան զինքը մղել ըլլալու լուսկեաց խորհող մը, «Յնորոտ Անդորուութիւններ»ին մէջ կ'ըսէ. «Այս գիշեր չեմ ու երազուած կայծեր հոգւոյս խորերը ինկան» երանի բանաստեղծին, Մինչ Դուբան այդ կայծերուն կը բաղձայ և անոնց չզոյուծենէն կը թօշնի, Ծիածանի հեղինակը հեշտօրէն անտոյժով կ'օրօրուի, Բաղձանքներ, իղձեր ունի, անոնք շատ չեն, բայց կը խռովեն զինքը թեթեւակի, Այդ իղձերը՝ որոնք սաւայն ծիծաղներու տեղի կուտան տարիներ ետքը՝ յետահայեաց խորհողին, ներշնչումի աղբիւրներ կը դառնան երիտասարդ զգայուն բանաստեղծին մէջ, և ի՞նչ է յաճախ բաղձանքը պատանիի մը, եթէ ոչ իտեական, հրեշտակային սիրոյ մը կարօտը, Շոյն կարօտը չէ՞ որ երգել կուտայ իրեն «Իղձեր» արձակ քերթուածը, Ինքը չէ սիրած դեռ, դեռ չէ խաբուած, դեռ չէ ճաշակած յուսախաբութիւնը սիրոյ կեղծ հրապոյրին, Մեծաբնեցի քերթուածներուն զեղեցկագոյնը սաւայն «Արեւին ուղղուած պաշտաւունքն է, Ատով է որ ան մանաւանդ կը յուսադէ թէ՛ ինք ճշմարիտ բանաստեղծ մըն է, Ով որ տժգոյն, անարիւն է, կամ ձմեռի մը երկար խստութիւնը անցուցած է, կը զգայ արեւին կարօտը, Ով չէ ողջունած զարնան արեւը, բարի, չերմին արեւը, Մեծարենց ամէնէն աւելի զգացած է այդ արփիին պէտքը, Այդ քերթուածը վսեմ աղօթք մըն է, տալ մը,

հեծանոսական ներքող մը, ատրուշանի սի-  
րահար պահապան բուրմի մը միմունջը.

Պլէզ զիս բոցեղէն ցանցեւումը մէջ  
Ու օտօրէ չեմագին:

Շատեր ունին արեւին տարփանքը, շա-  
տեր կը զգան անոր յուսատու, երանատու  
տապը իրենց երակներուն մէջ: Արեւին երզը  
Մեծարենցինը չէ միայն, ամէնուն, բոլոր  
արեւակարօտ հոգիներունն է: Դալուկ, հի-  
ւանդ մարմիններու, ընդարմացած տկար հո-  
գիներու իղձին, կարօտին զօրեղ արտայայ-  
տութիւնն է ան:

Մեծարենցի գործին մէջ իմաստասիրական  
խորութիւններ չի կան և ոչ ալ կնճռոտ  
զգացողութիւններ՝ որոնք կարենային մեր  
միտքը շփոթեցնել: Իր թերութիւնները՝ մտքի  
և մտածումի յայտնի պակասներ չեն ընդ-  
հանրապէս. լեզուական և ձեւական տեսա-  
կէտներով արտաքին ազդեցութիւններ են:  
Ատոնք չեն դադրի սակայն գործին թերու-  
թիւնները ըլլալէ: Մեծարենց ազգրւած է  
արդի բոլոր բանաստեղծներէն և մեր յաճախ  
անհրապոյր բանաստեղծութեան դրոշմէն քնաւ  
զերծ չէ իր գործը: Ան ազդուած է ոչ միայն  
Պարսամեանէն, Յարութիւնեանէն, Մալէզ-  
եանէն, այլ նոյն իսկ Տ. Զրաքեանի Ներաւ-  
խտնէն և ուրիշներէ: Թէ ի՞նչպէս: Պար-  
սամեանին երջանիկ բառերով օծած է բա-  
նաստեղծը իր գործը. «Անբջանք», «Երագանք»,  
«տարփանք», «դիւթանք», «հաշիշ», «լսզ-  
ուարթ», «բիլ», «սատափ», «բրբում», «՛րչափ  
կ'ուզէր: Մեծարենց modernismի հիւանդու-  
թենէն բռնուած կ'երևայ, իր օտանաւորներուն  
վերնագիրները հետեւողութիւն են Յարութիւն-  
եանի: Պարսամեանի «նոպա»ները մեծ տեղ ու-  
նին այս գործին մէջ. «Նոպաներ», «Տապի  
Նոպաներ» կան հոն: Ի՞նչ է այս նոպայ ըս-  
ուածը: Ծիւածանի հեղինակը «Տապի Նո-  
պաներ» գրեր է այն տեսակ օտանաւորի մը  
իրը վերնագիր՝ որ մարդ չկրնար ծիծաղը  
զսպել: Նկարագրածը յունիսի տաք ցօրեկ  
մըն է, հրավառ արեւին ըրած ներգործու-  
թիւնն է դաշտերուն, գիւղին վրայ: Պէտք էր  
պարզապէս այդ օտանաւորը մակագրել «Յու-  
նիսի Արեւը»: Այս կարգէն են դեռ. — «Կայ-  
ծեր», «Թրժուումներ», «Յայգանուագ», «Յնո-  
րոտ անդորրութիւններ», (անդորրութիւն մը  
որ ցնորոտ կ'ըլլայ, տարօրինակ բան) «Աչ.

նանային հեծութիւններ», «Սօնադին» (և  
այս Սօնադին գրողը զաւառացի մըն է և  
անոր կատարեալ աւելը ունի), «Բիւրեղի  
Դիւթանքներ», «Յայգային», «Կապոյտ Յա-  
ծութներ»[\*], որոնք շատ քիչ անգամ յաջոր-  
դող օտանաւորները կ'արդարացնեն:

Եսին մասէն զատ, Մեծարենց Ներաւ-  
խտնի հեղինակէն, թերեւս անգիտակցաբար,  
ընդօրինակած է յաջողութներ ալ: Հաշիշի գոր-  
ծածութիւնն ալ յաճախողէպ է Ծիւածանի  
մէջ: Ի՞նչ է այս հաշիշը որ միշտ կը գոր-  
ծածուի ամէն սկսնակի կողմէ. գէթ ան-  
գամ մը զգացած են անոր տուած զինուո-  
թիւնը, Մասնակի այս ազդեցութենէն զատ՝  
ուրիշ անձնական թերութիւններ ալ կան:  
Բնական գեղեցիկ պատկերի մը քանի մը  
տուններու մէջ նկարումին կը յաջորդէ սիրոյ  
կամ հոգեկան վիճակի մը միջամտութիւնը:  
«Յայգանուագ»ին մէջ սիրուն զիշերի մը  
նկարը անկատար թողած՝ բանաստեղծը նիւ-  
թէն կ'անջատուի բոլորովին: Ուրիշ տեղեր ալ  
կը դիտուի նիւթերու մէջ այս անկապակցու-  
թիւնը: «Զիւմիլութ»ը գործածուած զանա-  
զան տեղեր՝ զանազան պարագաներու տակ՝

[\*]Ս. մա՛նուաւանդ «Նապոյտ Յածութ-  
ներ». ի՛նչ ճեւակ բան է արդեօք այդ  
կապոյտ յածութը. կրնա՞նց նկարագրել:  
Կրնա՞նց նոյն ինքն նկարագրել անոր հե-  
ղինակը: Անխմաստ սենյոյիսմի մը նմա-  
նողական գայրումներն են մէկ բանի  
բանաստեղծներու փորձած այս մո-  
լոր կապկուրիւնները, որոնցմէ աղէկ  
կ'ընեն զգուհանալով նորահասներ,  
որովհետեւ ի՛նչ անուամբ որ ալ ներ-  
կայացուին անոնք մեր գրականու-  
րեան, գաղափարական սենյոյիսմի մը  
արեւուն մէջ, — այն սենյոյիսմը՝ զա-  
մասնաւորապէս Քրանսացի եւ պել-  
նիգացի բանաստեղծներ կը մշակեն,  
ոգիին համաձայն իրենց հիմնած  
Դպրացին, — ծիծաղելի կապկուրիւն-  
ներ կը մնան մեիւններուն բառա-  
կան սենյոյիսմի աշխուկաւորիւնները,  
զորս յաճախ չարաչար ծայրայեղու-  
րիւններու կը մղեն:

Խմբ. Ծան.

բանաստեղծին երեւակայած իմաստով՝ ձանձ-  
րացուցիչ է, նոյնպէս «ապրշուժը», ապրշու-  
մէ երազներն ունենալը այնքան լաւ չէ. անոր  
ցանցերուն մէջ երազները կը խեղդուին  
«Սատարիէ վերջալոյս». զիտէ՞ք գորշ սպիտակ  
դեղնութիւնը սատարին. երեւակայեցէք այդ  
տեսակ գոյնով երկինք մը. ատանկ օդային  
երեւոյթէ մը աւելի յուսահատեցուցիչ վայելք  
կարելի չէ երեւակայել:

#### ՏԻԳՐԱՆ ԶԷՕԿԻՒԹԵԱՆ

#### ՊԱՏԱՍԽԱՆ

#### “ՄԱՍԻՍ, Ի ՀԱՐՑՈՒՄ ԻՆ

Եթէ մտիկ ընելու տրամադրութիւնը ու-  
նիք՝ պզտիկ պատմութիւն մը ընեմ ձեզի:

Անշուշտ լսած էք Վանտէրպիլթի անունը,  
և եթէ լսած էք՝ հարկաւ զիտէք թէ ամերիկա-  
ցի նշանաւոր միլիտատէր մըն է, երկամու-  
ղինէրու ամէնէն հսկայ շահագէտը, զոր իր  
հայրենակիցները չեն վարանած «Ամերիկեան  
երկամուղիներու Շահապը» անուններու:

Մտի ծայրով միլիտոներու հետ խաղա-  
ցող այս մարդը բաւական տարիներ առաջ իր  
անդրանիկ զաւկին այցելութիւնը կ'ընդունի  
ցերեկ տտեն, աշխատութեան ժամանակ:

Երկամուղիներու Շահապը հազիւ թէ զլու-  
խը կը վերցնէ, ու կը գոհմանայ միայն հար-  
ցներով:

— Ի՞նչ է, Ալֆրէտ:

Հօրը պէս՝ տղան ալ գործնական մարդ է,  
չուզեր աւելորդ խօսքերով ժամանակ ան-  
ցընել, և ուղղակի նպատակին կը դիմէ:

— Հայր, որոշած եմ ամուսնանալ:

— Շատ լաւ, կը պատասխանէ Վանտէր-  
պիլթ, քեզի բաց վարկ մը կը բանամ, ուզածդ  
առ... հարկաւ ամուսնութեանդ օրը մեզի ալ  
լուր կուտաս:

Եւ զլիւռ շարժումով կը հասկննէ իր զաւ-  
կին թէ՛ ամուսնութեան պէս խնդրի մը համար  
չարժեր ատկէ աւելի ժամանակ վատնել:

Սակայն տղան չի մեկնիր, և հայրը, զար-  
մացած, կը ստիպուի նորէն հարցնել:

— Ի՞նչ է, Ալֆրէտ, ուրիշ բան մըն ալ  
ունիս:

— Հայր, կը մըմնչէ զաւակը, չէ՞ք ուզեր  
փիտնալ ապագայ կնոջս անունը:

Միլիտատէրը ուսերը կը ցնցէ անտար-  
բերութեամբ:

— Պա՛հ, իզմէ աւելի քեզի վերաբերող  
խնդիր մըն է ատ, չարժեր:

Բայց տղան կրկին կը պնդէ.

— Հայր, շատ ուրախ պիտի ըլլայի եթէ  
զիտնալ ուզէիք:

Եւ առանց հօրը սրտնեղութեան մէկ շար-  
ժումին կարեւորութիւն տալու, կը յարէ:

— Օրիորդ Կրէյս Ուիլսընը պիտի ըլլայ  
կինս:

— Ուիլսըն... Կրէյս Ուիլսըն... չըլար,  
չըլար, կը գոռայ Վանտէրպիլթ՝ տեղէն վեր  
ցատկելով:

Տղան սակայն յամառ է:

— Պիտի ըլլայ, հայր, կ'ըսէ տիրական ու  
անյողոցող շեշտով մը որ ապշութեան կը  
մասնէ՛ ամէն զիմադրութիւն իր պողպատեայ  
կամքին տակ ճնշելու վարժուած միլիտա-  
տէրը:

— Բայց զաւակս, դուն ալ ինձի չափ զի-  
տես թէ որչա՛փ աւրուած ենք Ուիլսըններուն  
հետ...

— Ի՛նչ, այո՛, ընտանեկան գծութիւններ,  
ով զիտէ՛ ի՛նչ փցուն պատճառներու բեր-  
մամբ... բայց հայր, ինչպէ՞ս կ'ուզէք որ այդ  
աստիճան աննշան հակառակութեան մը զո-  
հեմ իմ երջանկութիւնս, ինչպէս նաև օրիորդ  
Կրէյսի երջանկութիւնը:

Վանտէրպիլթ կը մտածէ միշտ մը, բայց  
քանի՛ կը խորհի, այնքան աւելի կը համոզ-  
ուի թէ անկարելի է այդ միութիւնը: Մէջ-  
տեղը արժանապատուութեան խնդիր մը կայ,  
և գոնէ ինք, Վանտէրպիլթ մը, չի կրնար  
զաւկին երջանկութեան զոհել այդ գերագոյն  
հարստութիւնը՝ որ արդէն այնքան յարգի է  
ամէն բարձրմիտի:

— Զաւակս, կը յարէ չոր ու կտրուկ շեշ-  
տով մը, անկարելի է որ հաւանիմ այդ  
ամուսնութեան:

— Եւ սակայն պիտի ըլլայ, հայր:

— Կրնայ ըլլալ, բայց իմ ըսելիքս ուրիշ  
բան է... կամ կը լքես այդ ծրագիրը և կամ  
ալ ամէն կապ կը խզես մեզի հետ:

— Ա՛ս է ձեր ամբողջ ըսելիքը:

— Այո՛:

— Քանի որ այդ է ձեր փափաքը, ու-  
րեմն այս վայրկեանէն կը մեկնիմ տունէն,  
ալ անգամ մըն ալ չվերադառնալու համար:

Զաւկին այս կամակորուժիւնը հեզնական ժպիտ մը կը ծագկեցնէ նշանաւոր շահադէտին շրժունքին վրայ:

— Տղա՛ս, կ'ըսէ կէս մը հեզնոտ շեշտով մը, այդ տարիքին մէջ որոշումները շատ շուտ կը տրուին... բայց եթէ անգամ մը հետեւանք մտածելու ըլլա՛ս... գիտե՞ս թէ Ուիլյամներու փեսայնալդ ի՛նչ պիտի արժէ բեզի:

— Շատ շատ ձեր ժառանգութենէն պիտի զրկէք զիս, չէ՞:

— Անշուշտ... և աոոր ալ արդիւնքը սա պիտի ըլլայ որ աղքատ պիտի դառնաս...

— Հոգս չէ, հայր, որովհետեւ ինձի գորավիզ պիտի ունենամ մեծագոյն հարստութիւնը...

— Կարծեմ Օրփորդ Ուիլյամները...

— Ո՛չ հայր, այլ ասո՛նք:

Եւ Ալֆրէտ Վանտէրպիլթ իր երկու բազուկները ցոյց կուտայ հօրը, աւելցնելով.

— Պիտի աշխատիմ, հայր, և պիտի ապացուցանեմ ամէնուն թէ՛ անպատեհաւ միլիառատէրի զաւակ մը ըլլալու պէտք չկայ՝ աշխարհի մէջ իր սրտին ու բողձանքներուն յարմար բոյն մը կազմելու համար...

— Գնա՛, զաւակս, բայց լաւ գիտցիր որ օր մը պիտի զոյլաս և կրկին ինձի պիտի դառնաս...

— Եթէ ինքզինքս լաւ կը ճանչնամ՝ կրնամ վստահաբար ըսել թէ ատանկ բան չպիտի պատահի... մնաք բարով:

Շարաթ մը վերջը՝ այս կամակոր տղան կ'ամուսնանայ իր սիրած աղջկան հետ, առանց հոգ ընելու որ կնոջը հայրն ալ միեւնոյն նկատումներով իր աղջիկը կը զրկէր ժառանգութենէ: Համեստ բնակարան մը կը յարդարէ, և իբր մեքենագործ կը մտնէ Կեղրոնական Նիւ Եօրքի Երկամուդիներու Ընկերութեան մէջ, աննշան շաքմաղանով մը. իւղի, ճենճի և ամէն տեսակ աղտեղութեանց մէջ կը թափախուի, բայց ոչ իսկ տրտունջ մը կը հանէ բերնէն:

Հայրը՝ միշտ հեզնութեամբ կը դիտէ զաւակին մաքառումը, բայց երկու տարի վերջը՝ տեսնելով որ չպիտի կրնայ անոր կամքը խորտակել, տեղի կուտայ, և ինքն իսկ անոր ոտքը երթալով, կ'առնէ տուն կը բերէ հարսին հետ: Հանդէսները որոնք այդ առթիւ տեղի ունեցած են Վանտէրպիլթներու հոյակապ

ասպարանքին մէջ՝ տակաւին մինչեւ այսօր անհաւասարելի կը մնան:

Պատմութիւնը լմնցաւ, և կարծեմ թէ գէշ չի պատշաճիր Մասիսի հարցումին:

ՄԷՐՍԷՏԷՍ

## ԳԵՐՄԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

### Դ Է Մ Ք Ե Ր

ՇՎԱՊԵԱՆ ԴՊՐՈՑԸ ԵՒ ԼՈՒՏՎԷԿ ՈՒԼԱՆՏ

Հակառակ այն փալլին ու յաղորդեան՝ զոր Ռոմանթիք Դպրոցը ունեցաւ ժ.Բ. Դարուն գերման գրականութեան մէջ, անցեալէն ներկային վերադառնալու պէտքը զգալի էր միշտ: Ապրիլ ինքնութեան ու այն իրականութեան մէջ՝ որ մեզ կը շրջապատէ, բանաստեղծութիւնը գտնել ու յղանալ վառարանին անկիւնը, շրջակայ դաշտին մէջ, անտառի արահետին վրայ՝ աս էր ջանքը Շվապեան Դպրոցին (Ecole Souabe), որ իր կատարելութիւնը ողջունեց ժ.Բ. Դարուն առաջին կէսին մէջ, և որուն զխաւոր վարպետն էր Լուտփիկ Ուլման, օժանդակուած ուրիշ ժանօթ բանաստեղծներէ, ինչպէս Շվապ, Քէրնէր և Ֆրէս-լի: Մէկ բառով՝ Շվապեան Դպրոցը առանց դրութեան Ռոմանթիզմի է, բնութեան սէրը, առանց բնագանցութեան, հասարակ կեանքը՝ իր պարզ ու անսեթեւեթ բանաստեղծութիւնով:

Բայց ճշգրէնք նախ տեղը այն բնագաւառին որ այս Դպրոցին օրօրանը եղած է:

Գերմանիոյ հարաւային-արեւմտեան կողմը, Պաւիեռայի, Ֆրանքօնիայի ու Հռենոսի վերին ընթացքին մէջտեղը տարածուած երկիրը կը կազմէր նախկին Շվապայի Դքսութիւնը (այսօրուան Վիւրթեմպերկի Քաղաքութիւնը) ուր, հին ատեն, ծաղկած է Վիինէզլինկերներու բանաստեղծութիւնը, և որ, ժամանակին, կայսերական տուն մըն ալ տուած է Գերմանիոյ: Այդ նախկին Դքսութեան մէկ սահմանափակուած մասը կը կազմէ այսօրուան Շվապիա (la Souabe) կոչուած փոքրատարած բնագաւառը, որ հարաւէն մինչեւ Պրիսկառ

կ'երկարաճողի և երկու լեռնաշղթաներ իր կողերը կը պարսպեն, Սեւ-Անտառը արեւմուտքէն, իսկ Շվապեան ժիւղա հարաւ-արեւելքէն, Դէպ ի հիւսիս երկարաճողը լեռնաբազուկներուն վրայ, դեռ մինչև այսօր, ուղեւորը իր իւրաքանչիւր քայլափոխին կը պատահի աւատապետական հինաւուրց զգեսկներու, անտառի թաւուտներով շրջապատուած, անբնակ, հիմաւեր, Հոն են դեռ Հօէնձօլէրնի և Հօէնշմաուֆէնի զղեակները, մէկը շքեղօրէն վերաշինուած, միւսը աւերակ, Անտառապատ լեռներու այս բարձրութիւններէն տեսարանը կը տարածուի ծիծաղկոտ հովիտի մը վրայ, ուր նէքար գետակը այգեստաններու, մրգատաններու, հիւսնայի պարտէզներու և դալարաւէտ մարգերու մէջտեղէն կը սողոսկի մեղմօրէն, Նձէ հետեւինք գետակին, իրարու ետեւէ կը հանդիպինք քանի մը յիշատակելի քաղաքներու. նախ Թիւպինկէն, համալսարանական պզտիկ քաղաքը, ուր ծնաւ ու մեռաւ Ուլանտ. յետոյ մայրաքաղաքը ՇՅուծկարթ, ուր Հէկէլ աշխարհ եկաւ. քիչ մը աւելի հեռու՝ արեւմտեան կողմը՝ Լէօնպէրկ, Շէլինկի ծննդավայրը. անկէ աւելի վար Լուտովիկսպուրկ, ուր Շիլլեր մեծցաւ և ետքը Մարպաս, ուր ծնաւ ան. Ու նէքար շարունակելով իր ընթացքը, դէպ ի հիւսիս, կ'իջնէ ընդարձակ դաշտավայր մը, ուր քանի մը վտակներ կուգան իրեն միանալու. Հոս է նաև Վայնպէրկ պզտիկ քաղաքը, զգինիի լեռքը, ուր, Շլոպէրկը պոսկող այգեստաններուն ստորոտը, կը գտնուի դեռ Քէրնէր բանաստեղծին տունը՝ Շվապեան Դպրոցին անդամներուն սովորական ժամադրավայրը:

Գերմանիոյ ամէնէն սիրուն, ամէնէն բազմամարդ ու ամէնէն յատկանշական մասերէն մէկն է Շվապիայի այս լեռնոտ խորշը. Բանաստեղծը թող խօսի քիչ մըն ալ. «Ո՛ւր պէտք եմ ուղղել քայլերս ես, օտար ուղեւորս, ո՛վ բարի Շվապիացիներ, ձեր բանաստեղծական դպրոցը գտնելու համար» — «Օտար ուղեւոր, սիրով պիտի ըսեմ զայն քեզի. Մտիւր մթին անտառը, արեւոտ մարզին ետին, հոն ուր կը բարձրանայ եղեւինը՝ այն մեծ ծառը՝ որ ծովերը ակօտող նաւին կայմը պիտի ըլլայ օր մը, հոն ուր Թալուներու զուարթ երամ մը ճիւղէ ճիւղ կ'ոստոտտէ երգելով. հոն ուր այժեամբ իր կրակոտ աչքերով կը ծայր մթին

մացառուտին մէջէն. հոն ուր կանգնագեղ եղջերուն կը ցածկէ կարծրաքարի ժայռերուն վրայէն. Ելիւր յետոյ Թանձրախիտ անտառէն, դաշտերուն մէջ, ուր ոսկեճանճէ՛ արեւին տակ, այգեւէտ բլրակողերը պիտի ժպտին քեզի, ու կապոյտ նէքար ձորին մէջէն. հոն ուր ոսկի հասկերու ծով մը կ'ալեծփի, կը վէտվէտի դաշտին վրայ, ու վերը՝ կապոյտին մէջ՝ արտոյտը կը հնչցնէ իր զուարթագին երգը. հոն ուր այգեգործը, հնձորը իրենց հագներգով լեռն ու դաշտը կը ճնդացնեն. Հան է Շվապիացի բանաստեղծներուն Դպրոցը և իրենց վարպետը կը կոչուի բնութիւն»:

Շվապիացին կամոգին յարած է իր բնագաւառին. հազիւ պզտիկ բաժին մը կը հանէ ան գաղթականութեան. իր աւանդավէպերուն, նոյն իսկ իր աւելորդապաշտութիւններուն պահպանումին մէջ հաւատարիմ, ոչ այնչափ խանդավառ, ընդհանրապէս լուրջ ու խոհուն, երբեմն միսթիքականութեան կը հակամիտի, ինչպէս սովորաբար լեռնաբնակը, Շվապիացի զրազէաներէն մէկ քանիները, տակայն, խզած են իրենց ծննդավայրին յարակցական կապերը և իրենց փոքրատարած տոհմավայրը փոխանակած են զերման մեծ տոհմավայրին հետ, ու ասոնք ամէնէն աչքառուններն են, Շիլլեր, Հէկէլ, Շէլինկ և Վիլանտ. Ուրիշներ, ընդհակառակը, աւելի հաւատարմօրէն պահած են բնագաւառին միտքը և տեղական դրոշմը. ու ասոնք առանձին խումբ մը կը ձևացնեն, շատ բնորոշ ու շատ համաձեռն — «Դպրոց չունինք մենք երբեք, կ'ըսէ Քէրնէր, Թալուն. ներու երամ մըն ենք մենք, որոնցմէ իւրաքանչիւրը իր կտուցէն կը Թալնէ այն երգը, որ իր սիրտէն կը բխի» — Բոլոր այս Թալուններն ալ զրեծէ միևնոյն երգը կը գեղեցիկ, միևնոյն նուագը կ'եղանակեն, Թէև տարբեր եղանակաւ որոշմներով. և այս երգը, որչափ որ ալ նոյնը, որչափ որ ալ համանման ըլլայ, միշտ հաճելի է ու յուզիչ, որովհետեւ «սիրտէն կը բխի» Այդ անգուզական սիրտը, իրենց «վարպետ»ին՝ բնութեան հետ միացած՝ կը կազմէ այն աղբիւրը, որմէ անասհմանօրէն ներշնչուեցան Շվապիացի բանաստեղծները. ասոր վրայ պէտք է աւելցնել նաև իրենց երկրին հին աւանդավէպերը. Ամբողջութիւն մը շարադարձութեամբ մէջ անփոյթ, իսկական ու ճշմարիտ գոյնով մը կ'արտայայտեն բոլոր այն տպաւորու-

թիւները և մտածումները՝ զորս կ'ունենան իրենց առաջին ներշնչումով, առանց անոր բանաստեղծական բարձր ու ամպածրար թռիչք մը տալու, պարզ, անսեռեւեռ բայց զուեղեղ ու զրաւիչ։ Աւելի բանաստեղծ են անոնք, քան արուեստագէտ։ Եւ արդէն ընդարձակ նիւթերը զրեծէ անծանօթ ու օտար են իրենց, մշակուած սեռին արտադրութիւնները երգելու՝ (lied) և գեղօններու սահմանէն անդին չեն անցնիր։ Ուլանտ միայն փորձած է բացառաբար մշակել ծառերական սեռն ալ, առանց մեծ յաջողութեան։

Շվապեան Դպրոցին առանձնայատկութիւններէն մէկն ալ այն է որ, զրեծէ բոլորովին առանձին, ինքնիրեն մէջ փնտռած է իր զարգացումը, զրականութեան ընդհանուր հոսանքէն դուրս, միշտ իր ուժերուն, իր բնիկ տարրին մէջ մնալով, բան մը որ թերութիւն մը եղած չէ իրեն համար, ընդհակառակը, թերեւս այս կղզիացումին համար է որ միւսներէն աւելի յատկանշական բան մը ունի այս Դպրոցը, իրենց քնարերգական ձեւին պարզութեան համար, Շվապիացի բանաստեղծները, շատ անգամ, բաղդատութեան մէջ զրուած են Կէսթէի կամ Շիլլերի հետ՝ իրենց զրական սկզբունքներուն ազատականութեան ու նկարագրի վեհանձնութեան համար, Դասական գեղեցկութիւնը կը պակսի իրենց մշակած սեռին մէջ։ Ան երբեք այս Դպրոցին զաղափարականը եղած չէ. ինքզինքնին հնութեան հետ մրցակցութեան մէջ դնելը միտքերնուն անգամ անցուցած չեն։ Իրաւ է. թէ Միշին Դարը, Ռոմանթիքներուն պէս, շատ մեծ ներգործութիւն ունեցած է իրենց զրականութեան վրայ, բայց Ռոմանթիզմի վարդապետութիւններէն ու ձեւէն շատ հեռու մնացած են, և նոյն իսկ, առիթը ներկայացած ատեն, բնաւ չեն քաշուած անոնց դէմ պայքարելէ։ Եթէ Շվապեան դպրոցը հաստատմօրէն ազդուած է բանէ մը, ան ալ ժողովրդական երգն է, որուն մէջ ապահովաբար, ոչ մէկ Դպրոց կրնայ հաւասարիլ իրեն։ Գրականութեան մէջ Հէրտէրի սիրած գաղափարները ամէնէն աւելի այս դպրոցին օրովն է որ կատարեալ զարգացումի մը հասած են, մշակելով, պարզ, ինքնածին ու ժողովրդական ներշնչումին գաղափարը։ Ասոր համար Շվապիացի բանաստեղծները, իրենց երգերուն պէս, անօրինակ ժողովրդականութեան

թիւն մը շահած են ամբողջ Գերմանիոյ մէջ։ Շվապեան Դպրոցը, իր ժողովրդական-ընտանեկան նկարագրին հետ, սահմանաւոր էր ժողովել նաև կրօնական բանաստեղծութեան վերջին արձագանգները։



Շվապեան Դպրոցին ամէնէն կարկառուն դէմքը և գերման ժողովրդական բանաստեղծութեան մէջ ամէնէն շահեկան ու ամէնէն շատ երգուած քերթողներէն մէկն է Լուովիկ Ուլանտ։ Տգեղ, անհամբուր կերպարանքով, յամառ ըլլալու աստիճան հաստատամիտ, Ուլանտ կանուխէն իսկ կը յարի բանասիրութեան, որուն շատ կը յարմարէր իր ճաշակը։ Առաջին գործը, որ մեծ ազդեցութիւն կ'ընէ իր վրայ, լատինական հին քերթուած մըն էր։ Հետզհետէ կը մօտենայ նաև ուրիշ հեղինակներու, ուրիշ ընթերցումներու, որոնք յայտնապէս ցոյց կու տան իր միտքին որոշ ուղղութիւնը։ Բան մը որ ամէնէն աւելի կը փնտռէ ան գերման հնագիտական զրականութեան մէջ, դիւցազնական նկարագրին է, նոյն իսկ արտակարգ, «անհունին զգացումը, որ ամէն կողմէ կը շրջապատէ մարդը», որովհետեւ ան ալ ունեցած է իր ուսման թիւք կարծ շրջանը։

[Յաջորդով]

ՄԵԼԻԲ-ԹԷՎԷԲԷԼ

## «ՄԱՍԻՍԻ ԲԱՅԱՌՈՒՆ ԹԻՒՆՔ»

Փափաքելով ստուար ծաւալով ու նոյն բովանդակութիւնով բիւ մը նրաստակել, Մասիսի նախորդ շաբաթուան բիւլ չնրաստակելով՝ կցեցինք այս բիւլին, կազմելով գրական պրակ մը՝ որմէ վնասի ենթ թէ գոն պիտի մնան մեր բոլոր բաժանորդները եւ ընթերցողները։ Ընդարձակ յօդուածներու մէկ անգամմէն տեղ տալու պէտք էր մանաւանդ՝ որ հարկադրեց մեզ մէկ թիւով մը չբաւականանալու, ինչ որ գեղեցիկ առիթ մը դարձաւ, կազմելու համար այս բիւլ, որուն նմաններ ալ յառաջիկային պիտի ունենանք նրաստակելիք։

## ՀԱՅ ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

«ՄԱՍԻՍ»-Ի ԱԼՊՈՄԻՆ ՄԱՍԻՆ

Մասիսի Ալպոմը, ուրախ ենք դի-  
տելու որ՝ ողջունուեցաւ հասարակու-  
րենէն այն համակրութեամբ, որուն  
արժանի էր: Ահա՛ քէ ի՛նչպէս կը  
գնահատեն զայն գրագէտներ. —

Իբր բաժանորդներու նուէր հրատարակ-  
ուած «Պոլիսի արդի գրագէտներու խմբա-  
նկարը» եւ ալ ստացայ իմ կարգին: Գեղե-  
ցիկ է մեծամունքը, յաջող գործադրութիւնը.  
կը շնորհաւորեմ:

Սակայն չեմ կա՛ծեր որ պատկերացեալ  
երեւ իննեակներ լրումն ըլլան արդի գրա-  
գէտներու, ոչ ալ գլխաւորներն հաւաքած  
լինելու զաղափար մը նկատուի, եւ ոչ ալ  
կենդանագիրներու դասաւորութիւնը ար-  
ժանեաց դասակարգութեան հիմ մը ունե-  
նայ: Այսպիսի բաներ առձեռն գտնուածնե-  
րով եւ պատահական պարագաներով կը  
կազմուին եւ անով լիապէս կ'արդարանան  
եւ նմանօրինակ գործոց շարունակութեան  
բաղձանք կը գրգռեն:

ՄԱՆԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ

Գաղափարը շատ լաւ յղացուած է, եւ  
գրական քերթի մը կողմէ պատշաճ նուէր  
մըն է աս իր ընթերցողներուն: Կ'արժէ որ  
ամէն գրատէր ունենայ այս պատկերէն:

ԲԻԻԶԱՆԴ ՔԷԶԵԱՆ

Յաջողութիւն մը՝ որուն համար կ'արժէ  
շնորհաւորել Մասիսի խմբագրապետ ենով  
Արմէն Է.Ը.:

ՅԱԿՈԲՈՍ ԺԷԶԻԶԵԱՆ

Մայիսի աղուր ծաղիկներուն հետ  
Հասաւ ձեր Ալպոմն ինձ բուրումնաւէտ  
Վսեմ դէմքերու շնորհմովը առաս.  
Եւ պիտի մնայի ձեզ շնորհապարհ  
Եթէ իմ պատկերս համահարով աղբաս  
Ձեռնդուած չըլլար այդ խումբին հակաս:

ՍԻՊԻԼ

— «Մեծ դէմքերու հանդիսարան  
այնքան աղուր եւ աժան  
Ալպոմին մէջ — կը հարցուներ երէկ ինձ  
մէկ բարեկամ —

Անկեղծօրէն քսէ՛, ո՞վ կայ երեսնալու  
անարժան . . . »:

— «Մարդ չիմանայ, ըսի իրեն, կը կարծես քէ  
լսկ Է՛ս կամ . . . »:

ԱԼՓԱՍԼԱՆ

Ալպոմդ, — Թրեանայ մատուցանութեան  
ծաղիկներէն կազմուած այդ փունջը, — գե-  
րազանցապէս նորօրինակ, նաշակաւոր է  
ու գրաւիչ:

ԶԻՅԹԷ-ՍԱՐԱՏ

Անոնց համար՝ որոնք նոր զաղա-  
փար պիտի կազմեն Մասիսի Ալպոմին  
մասին, կրկնենք քէ ի՛նչ է ան: Ալ-  
պոմը կը բովանդակէ լուսանկարներ  
Պոլիս գտնուող մեր ամէնէն ակաւաւ.  
ուր գրագէտներուն, բանաստեղծնե-  
րուն եւ հրապարակագիրներուն, գե-  
ղասիպ ու իրենց վերջին դիմագծու-  
րեան հաւատարմութիւնովը եւ որոնք  
են. —

Տ. Մաղափիւ Արք. Օրմանեան

Նդիբէ Նդիսիկ. Գուրեան

Մուսեղ Նդիսիկ. Սերոբեան

Բաբգէն Վարդ. Կիւլէտերեան

Տիկին Զապէլ Ասատուր

Տիկին Զապէլ Նապեան

Ալպոյանեան Արցաի

Ալիփար Յարութիւն

Անէմեան Մկրտիչ

Ասատուր Հրանտ

Գազանեան Յովհաննէս

Դօշունեան Միսաք («Բասիմ»)

Զօհրապ Դերիգոր

Թէոդիկ

Հորոյ

Ճէնիգեան Յակոբոս

Մամբրեան Յարութիւն

Յարութիւնեան Արտաշէս

Յարութիւնեան Յովհաննէս

(«Թլկասիցիցի»)

Զիւքրէ-Սարաճ Օննիկ

Պարամեան Մերուժան

Պերպերեան Ռեքեռ

Սամիկեան Ռօսօլճ («Տօմիցօ»)

Տէմիրճիպաշեան Նդիս

Տէր.Անդրէասեան Նուաւնդ

Փանոսեան Աղեմաւոր

Դէչեան Բիւզանդ

Գոհացում՝ ապու համար՝ չմեղի եղած. նոր խնդրանքներուն, կը հարկադրուինք Ալպօմը ստանալու պայմանաժամը երկարաձգել մինչև յուլիսի վերջը: Այս օրուան յուսականէն մինչեւ այդ բուսկանը՝ Մասիսի սարեւ կանկանախիլ փոխարժէքով բաժանորդագրուող ո՛ր եւ է բաժանորդ իրաւունք ունի ձիաքար ստանալու Ալպօմը:

[Շեփեմք հոս քէ՛ եղած խնդրանքներուն առասուրբեան յուսակաւորիչը չկարենալով հասնիլ, չենք կրցած դրկել դեռ՝ անոր իրաւունք ունեցողներէ ոմանց Ալպօմները, որոնք յաջորդաբար պիտի ստանան:]

#### ԵՂԻՍ. ՏԷՄԻՐՃԻՊՍ.ՇԵՍՆԻ

Վիճակը հետզհետէ կը ծանրանայ: Իւ արդէն իսկ ծանօթ ջգային հիւանդութիւնը սասկացած է այն պատճառով, որ հիւնք ամիսէ ի վեր որ եւ է սնունդ առնել չուզեր՝ վերջ մը ապու համար իր կեանքին, եւ ներարկումով կը կերակրեն զինքը (lavement nutritif). այդ ներարկումը հինգ-վեց օրէ ի վեր տիքէն կը կատարեն: Իր հիւանդութեան արդի վիճակն է cachexie par inanition «ծիրում անօրոք բեան պատճառով»: Եղիմ Տէմիրճիպաշեանը դարմանող բժիշկն է Ազգ. Հիւանդանոցի յիմարաբոյժ Տօքթ. Պօղոսեան է՞, որ անոր նախկին սաներէն է: Իսկ զինքը խնամող միակ կինը — պէտք կայ՝ յիշեցնելու — միշտ Տիկին Նիսրենն է, որ Գրութեան Քրոջ մը անձնուիրութիւնով կը գործուրայ հիւանդին վրայ, հոգ կը տանի անոր սնունդին, մահութեանը, դեղերուն եւ կը տակաւ անոր ջգային հիւանդի բոլոր բնականոյններուն: Առանկ կը շարունակէ տասնքմէկ տարիէ ի վեր, որուն միջոցին Տիկին Նիսրեն չէ ուզած բնաւ բաժնուիլ եղիա Տէմիրճիպաշեանէն, անոր հետ փողոց ելլելով եւ անոր հետ տուն վերադառնալով՝ մօր մը պէս: Ինքը եղած է նաեւ անոր բարոյական մխիթարիչը, որովհետեւ Տէմիրճիպաշեան՝ իր հիւանդութեան բերումով՝ ինքզինքը լուծած կը գտնէ իր ազգականներէն, իր բարեկամներէն եւ իր

առակերտներէն եւ միայն Տիկին Նիսրեն ունի իր հիւանդութեան սնարին մօտ, եւ ոտի վրայ եղած ասեմն ալ՝ զինքը սկստօղ ու մխիթարող: Ո՛վ բարեբ:

#### ՇՍԲԳ-ԻՅԵԼ, ՍՈՒՐՀՍՆԳՍԿ

Հանդիմով կը ծանուցանենք քէ՛ կայս. բարեհաճ իրաւէ մը արտօնած է հրատարակութիւնը ձերթի Շարգիչէ եւ Սուր. հանդիմով օրաթերթերուն, որոնք փակ կը մնային իրենց Տեր եւ Տնօրէն՝ Տիգրան է՞. ճիվէլէկեանի մահուան հետեւանով: Ասկէ ետք անոնք պիտի հրատարակուին իր զուկին Յակոբ է՞. ճիվէլէկեանի տնօրէնութեան տակ: Արդէն Շարգիչէ սկսած է իր հրատարակութեան երկու շաբաթէ ի վեր. իսկ Սուրհանդակ մօտ ասեմն լոյս պիտի տեսնէ, գեղեցիկ կազմակերպութեամբ մը: Մեր շնորհաւորութիւնները կը յայտնենք մեր պատշոնակիցին եւ յաջորդութիւն կը մաղթենք:

#### ԱՐԵՆԵԼԻ

Հանդիմով կ'արձանագրենք քէ՛ Լուվէնի (Պելնիգա) Միջազգային Յոցանանդէսի Մամուլի հիւղին յոտուկ Ինանասիշ Մարմիր առաջին մրցանակ նուիրած է Ա.Ե.Ելիքի: Այս գնահատումը արժանի վարձն է այն, յաջորդութեան եւ դիրքին՝ որուն տիրացած է Արեւելք, իր բազմաւեայ գոյութենէն մինչեւ այսօր, մահաւանդ նեկայի իր արջանին, ուր խմբագրական եւ վարչական իր նոր կազմակերպութիւնով՝ տեղական Հայ Մամուլին մէջ գրուած է առաջնակարգ տեղեկէն մէկը, իբր տիպար առաւելութիւններով օրաթերթ մը, կառավարուած խմբագրական կարող Մարմնէ մը: Մեր շնորհաւորութիւնները կը յայտնենք մեր համակրելի պատշոնակիցին՝ Արեւելքի իր արժանացած այս գնահատումին համար:

Եղիքէ Եպիսկ. Դուրեանի «Անտանի Մէջ» հերթաւորին մէջ, [Մասիս, թիւ 26] «տարբեր մը պատգամ» կարդալ «դաբիր մը պատգամ»։ «Գլուխ պուրակին» կարդալ «պուր պուրակին»։ Մերու ժամ Պարտաւեանի «Իսկիւր» հերթաւորին մէջ [Մասիս, թիւ 28—29] «Մամուլի» կարդալ «Մամուլի»։

Հիմնադիր. Գ. Ս. ԻԺԻԻԺԵԱՆ: Արտատպ. 80 ԳԺ. Ե. ՄԱՍԻՍ: Տպագր. ՍԱԿԱՆԵՆ

Թինէն ետքը Ա. մրցանակ ստացած են վարժարանին ուսանողներէն և երիցագոյն կարգէն Պ. Պ. Յ. Արէլեան, Մ. Իսկէնտէրեան և Յ. Ա. Թ. տէրեան. իսկ Բ. մրցանակ՝ երէց կարգէն Ա. Ա. Ժտէրեան, Ռ. Պէլլէրեան և Մ. Պալըքճեան: Հանդէսին միջոցին ներկաներէն Մանուկ աղա Օզնիկեան ինքնաբերաբար և իբր սկզբնաւորութիւն 30 ոսկի նուիրեր է վարժարանին մէջ մատենադարան մը հաստատելու համար, որ պիտի կոչուի «Օզնիկեան մատենադարան»:

## «Մ Ա Ս Ի Ս» Ի Հ Ա Ր Յ Ո Ւ Մ Ը

Ընթերցողներու մեծամասնութեան մը կողմէ յայտնուած փափաքին վրայ, կը վերսկսինք մեր Հարցումներու Բաժինը, զոր ընդհատած էինք ատենէ մը ի վեր: Այս առիթով դիտողութիւն մը: Ընթերցողներէ ոմանք դիտողութիւն կ'ընեն որ՝ հարցումներու այս բաժինը, ուր կը մշակուին աւելի զուարթ նիւթեր, կը հակառակի Մասիսի լուրջ ուղղութեանը: Դիտել կուտանք թէ՛ մենք ատանկ չենք խորհիր: Այս բաժինը սահմանուած է ընթերցողներու միջև գրական զուարթ ժամանց մը ստեղծելու, և արդէն թերթին բուն մարմինէն (corps) անջատ ըլլալով, ո՛ր և է կերպով մաս չկազմեր անոր գրական ուղղութեանը հետ: Փափաքողներ կրնան զուարթիլ անով կամ ո՛չ: Հարցումները գրական մնայուն գոյն մը չունին և անոնցմով չհետաքրքրուողներ, — զուտ գրական հարցերու հետամուտներ, — կրնան զանց ընել զանոնք, լոկ թերթին ներքին գրական էջերուն յատկացնել իրենց ուշադրութիւնը: Արդէն չէ՞ որ՝ թերթին մարմինէն դուրս բոլորովին յաւելուածական էջեր կը կազմեն կողքին այս հրատարակութիւնները, զորս մասնաւոր գոհողութիւնով մը կը ներկայացնենք ընթերցողներուն, հատարակութեան գահացումը նպատակաւէտ ունենալով յիշտ:

Է. ՀԱՐՅՈՒՄ.—Ո՛ր տարիքին ամուսնանալ հաճելի է կնոջ մը համար. այր մարդո՛ւ մը համար. և ինչո՛ւ: Պատասխանները կարճ և սրաւ միտ պէտք է ըլլան: Յաջողագոյնը իբր մրցանակ կը ստանայ մեր է՛ն վերջին հարցումէն խոստացուած ամերիկեան ժամացոյցը: Պատասխանները կ'ընդունուին մինչև չորեքշաբթի իրիկուն: [Յաջորդ թիւով մասնաւոր հարցում գաւառացի ընթերցողներուն]:

## ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԴԻՏԱԿԱՆ ԱՄԵՆԱՎԵՐՋԻՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ կը դարմանէ ամէն տեսակ ակուպի և լինտի հիւանդութիւնները, փտած ակուաները կը լեցնէ՝ աւողջ ակուաներու պէս երկար տուն գործածուելու պայմանով:

ԲՈՒՈՐՈՒԻՆ ՆՈՐ ՄԵԹՈՏՈՎ, նուրբ, ճաշակաւոր և դիմացկուն արուեստական ակուաներ կը պատրաստէ, բնականին ճիշդ նման:

Հիւանդ կ'ընդունին ամէն օր իր դարմանատան մէջ, Բերա, Ուեժ Բարմաք-Պաբու, Թիւ 8, կարօտ հիւանդները ձրի կը դարմանէ հինգ-չաքթի օրերը՝ Բերաի Աղքատախնամ դարմանատան մէջ:

Կիրակի օրերը ժամայրութեամբ կ'ընդունի:

**ԱՐԵՒԵԼՔ** ՕՐԱԹԵՐԹ ազգային, գրական եւ ֆաղսֆական. —

Բաժանորդագրութիւն Կ. Պոլսոյ համար 80 շրջ. : գաւառներու համար 108 շրջ. և օտար երկիրներու համար 35 ֆր. : Ձեռքէ վաճառում՝ ջապը փարա: Հասցէ՝ Ղալաթիա, Բամանտո փողոց: ԱՐԵՒԵԼՔ հրապարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

**ԱՐԵՒԵԼՔ**, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներով առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ, օր աւուր աւելի՝ հրապուրիչ դառնալով՝ նորանոր բարեօրոշմներու շնորհիւ, զորս ներառեալ է թերթին մէջ: Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՆՈՒՄ ԲՈՒՄ ԲՈՒՄ ԲՈՒՄ հանդամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսարաններ: Ոչ նուազ կը զննատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, տնտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական ևայլն, բացի գրական, բանասիրական գրուածքներէ, որոնք տեսութիւններէ ու Զուարթ Նօթերէ, որոնք նիւթերու ճոխ պէսպիսութիւն մը կը կազմեն:

## ԼՈՅՍԻ ԵՐԵՍ ԿԸ ՏԵՍՆԷ

Մէկը՝ որ երկար ատեն տառապելէ ետքը ակուպի ցաւով՝ զայն քաշել կուտայ ճարտար ատամնաբոյժի մը, կամ արհեստական նուրբ միջոցներով լեցնել կուտայ ակում, կամ զառոյթի մէջ առնել կուտայ, ա'լ անգամ մըն ալ երեսը չտեսնելով ցաւին: Խնդիր է սակայն միշտ՝ լաւ, ճարտար ու արուեստին դաղանիքներուն գիտակ ատամնաբոյժ մը գտնել: Այս նպատակին համար առանց վարանելու և գոհ մնալու մեծ ապահովութեամբ պէտք է զիմիկ հանրածանօթ ատամնաբոյժ Խաչիկ Էֆ. Ժամկոչեանի, որուն համբաւը և կարողութիւնը վաւերացուած է ամէնէն: Դիմել Պաշէ-Գաբու:


## ԵՐԿՈՒ ԿԱՐԵՒՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՆՁԵՐՈՒ ԹՇՆԱՄՈՒՆ՝ դրած է Տօքթ. Յովս. Տ. Ստեփանեան մասնաւորապէս ծնողքներու և դաստիարակներու համար, որոնք կը փափաքին գիտնալ թէ ի՞նչպէս կարելի է օգտակարապէս խօսիլ մանչերու, իրենց տարիքին յատուկ եղող մոլութեան վրայ և անկէ զգուշացնել զանոնք: Կատարեալ դեղագիր մըն է այս գրքոյկը՝ գեղութեան դէմ: Դինը 5 շրջալ:

ՄԱՆՁԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄԸ՝ կը խօսի մանչերու յատուկ մոլութեան վրայ բո՛ւն իսկ մանչերուն, որպէս զի անոր բնութիւնը և վտանգաւորութիւնը հասկնան նոյն իսկ իրենք ու կամովին հրաժարին անկէ: Անգլիացի ընթերցողներէ ա'յնքան համակրութիւն վայելող այս գրքոյկը հայերէնի թարգմանած է Տօքթ. Յովս. Տ. Ստեփանեան հայ պատանիներու ծառայութիւն մը մատուցանելու համար: Բացարձակապէս վտանգելի ու անօրինակ կերպով աման — լոկ 40 փարա — որպէս զի մատչելի ըլլայ ամէն մանչու: Կեդրոնատեղին՝ Պալենց Կրտստուն, Կ. Պոլիս:

# ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զատ, մասնագիր-  
ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 12 տարար և երկար տարիներէ ի վեր  
կը դարձանէ ստամոքսի, ազիք-  
ներու, միզային ճամբաներու հիւանդութիւնները, ջղային տկարութիւն-  
ները, հին և նոր դադիական ախտերը: Այս վերջին ախտերը՝ առանց  
ստամոքսի խանգարման և նորագոյն մեթոտներով կը բուժէ կարճ մի-  
ջոցի մէջ: Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը: Զորեքշարթի  
օրերը միայն ձրի: (8-10)



Անկարելի է որ ընտանիք մը առանց  
կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն  
է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ  
լաւ մեքենայ մը անթիւ և անհամար  
ծառայութիւններ կը մատուցանէ, մինչ-  
դեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ  
դժգոհութեանց և տաղտուկի ազբիւր  
մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

## ՍԻՆԿԵՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի  
միանգամայն մեքենաներ  
կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է՝ այս մեքենան  
ամէնէն աւելի կատարելագործուածը,  
հաստատունը և դիւրագործածելին ըլ-  
լալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն  
ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

ՍԻՆԿԵՐԻ մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան  
վաճառատուններուն մէջ՝

ԿՊՇԱՐՔԱՆ  
ՄԱՍԻՍ  
ՎԱՍԻՍ

ԿԱԼԱԹԱ

ԲԵՐԱ

ՊՈԼԻՍ

ՍԵԻՏԱՐ

1. Մեծ փողոց, Պօս Մառէի դէմ, 343 և 343.
2. Մեծ փողոց, Կալաթա Մէրայի Լիւէին դէմ,
1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.
1. Սուլթան Համամ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ. 13.
- 2 արը Պօյու, Թ. 120.
- Դասերը եւ նորոգութիւնները ճրի.

կատարեալ երաշխաւորութիւն:

Մասնաձեռքեր գաւառներու բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ  
Փողոց, Թիւ. 343 և 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:

# ՄԱՍԻՍԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և գաւառներու համար տարեկան 6 շաբաթ  
Արտասահմանի 14 ֆրանք:  
Թղթատարութեան ծախսը մեր վրայ:  
Բաժանորդները՝ իրաւունք ունին ստանալու մեր պարգեւները,  
միշտ ճիշդաբար, թղթատարութեան ծախսն ալ մեր վրայ:  
Մասին բաժանորդագրութիւնը բացարձակապէս կանխիկ է:  
Հրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:  
Նամակ կամ որ և է գրութիւն ուղղել առ

ԵՆՈՎԱՐԱՐՄԷՆ

«ՄԱՍԻՍ» Ի Հասցէին

Գուրգուլու խան, թիւ 7, Կալարա, Կ. ՊՈԼԻՍ

در علمه غلطه قورشونلی خاتمه نومرو ۷ «ماسيس» غزتمسى اداره خاتمهسى

Rédaction de la Revue «MASSIS»

Nº. 7, Courchounlou Han, Galata.  
CONSTANTINOPLE

ԲԱՑԱՌԻԿ ԱՌԻԹ ՄԸ ԴՐԱՍԵՐՆԵՐՈՒՆ. — ԶԱՐԴԱՐԵԱՆ ԴՐԱՏՈՒՆ  
ՆԷՆ. ՄԻՆՅՆ 20 ՂՐՈՒՇ ՓՈԽՄՆ 60 ՂՈՈՒՇԻ:—1. Ասորա. վէպ. Բ.  
Սիլվա. թրդ. Թէրզեան 10: 2. Ասրիեն. վիպերդ. Բաղասմարեան 10:  
3. Առողջապահութիւն. Տրթ. Փէշարմալճեան 2½: 4. «Ենդընդունի».  
Տ. Սէթեան 5: 5. Դիւրուսոյց Մեքոս Անգլ. Բերակաւնութեան. Ասա-  
տուրեան 15: 6-7. Ամուսնական Խնդիրներ. 2 հատոր 2½: 8. Սփռ-  
փանկ Ռամկին. Մ. Յովհաննէսեան 5: 9. Ուղեցոյց Գրագիտութեան  
Թուրքիեն Լեզուի. Դալպճեան 5: 10. Պեսնալոցքի. Լինհարտ Դեր-  
տրուդ 5: Այս 10 հատոր վիպական, առողջապահական, գրական, լեզ-  
ուաբանական, բանաստեղծական և մանկավարժական գրքերը՝ որոնք 60  
զրուշ արժէք ունին, 2) զրուշի կը ծախուին Զարդարեան Եղբայրներուն  
Դրատունէն՝ Բերա, Դուլէ-Դալու թիւ 695: Դաւաններու համար 7  
զրուշ աւելի: Դրատներն պէտք է փոխան օգտուիլ այս առիթէն, ղի-  
մելով վերելի հասցէին, ուր կը ծախուին նաեւ ամէն տեսակ թուրքե-  
րէն, հայերէն և ֆրանսերէն նոր թէ գործածուած գիրքեր, աման և  
գիւրամատչելի գիններով:

«Մասիս»-ի այս հացառիկ թիի՞ն գինն է 2 դր.